Թէ շատ թէքիչ զըր[illegible]է մարդ-նա հետ խուր տանիլ չըկարէ ․ մարդըն պլտի հանց ջանայ, որ 'ի յայն կեանքն չամչէ ։ Որ 'ի հոս տայ հոն առնու, հոս զըրկէ նա հոն վըճարէ ․ այն կեանքըն ճարակ չըկայ, որ փողով խուր պարտքն խալսէ ։

Զարմացաւ խալիֆայն՝ և ասաց ․ փառք ոյ կենդանութեան՝ որ կայ և մնայ յաւիտեան ․ թէ խումարն այնչափ խելօք խօսք կու խօսի ։ Նաւ ասաց թէ այս մարդըս խելօք է, և վն մեղաց զայն կառնէ ․ զի թէ դա խումար էր՝ նա հանց բանչասէր ․ և դարձաւ խալիֆայն 'ի քաղաքն ։ Նաւ օր մի այլ հեծեալ էր խալիֆայն, և անցանէր դէպ 'ի հողվարքն, զի ճանապարհն ընդ այն էր ․ և տեսաւ զփահլուլն ու ասէ ․ զինչ կառնուս 'ի հողվարքն ։ Նաւ ասէ փահլուլն ․ բազում աւուրք աստ կամ և կու չափեմ զիմ գերեզմանն ու զքոյն, նա խակի քոյն աւելի չէ քան զիմն ․



դու

դու խալիֆայ ես, և ես աղքատ մուրա-
ցիկ եմ. և քո հողն և իմն մէկ չափով է։

Ու տաց ուշաճառ ղայա։

Ո՛ մարդ մի՛ զհոգիդ դատեր, ու զմար-
մինդ առնէր սիրելի. դարձի՛ր 'ի մեղաց
ճանփէն, որ չլինիս ողորմ ու լալի։ Բանա
ու բարի գործէ. զի քէվրանըն քեզ կու-
նայի. յայս հողդ դու հանց գընա,
որ հոգիդ հըրոյն չըլինի։

Ու տաց խալիֆայն ընդ իւր մեծա-
մեծքն. տեսէ՛ք, ի՞նչ իմաստուն է դո-
րա խօսքն. և համարձակապէս խօսքն կու-
տայ. չէ՛ պատրտ որ զդա 'ի մեզանից 'ի զատ
թողուք. և ապա հրամայեց կոչել զնա
'ի յիւր դարպասն։ Ու օր մի խալիֆայն 'ի
յաթոռոյն ելեր գնացեր էր, և գնաց փահ-
լուլն նստաւ 'ի յաթոռն խալիֆային։
Ու եկին ձորտերն՝ սկսան ծեծել զնա, և
նա ճչեց ալինա։ Լսեց խալիֆայն՝ երեկ
՝ի սիրտ ելաւ ծառասմունն, և ասէ. է՛
փահլուլ՝ յե՞ր կու ծեծեն զքեզ։ Ասաց
փահլուլն. է՛ տիեզերական խալիֆայ.
երբ զիս այս մէկ պահ նստելուս համար
հանց կու ծեծեն. ապա 'ի քեզ զի՞նչ պի-
տի անեն դատաստանին։

Ու տաց ուշաճառ ղայա։

Սարդէք մի՛ ծեծէք դուք զիս, չեմ ցան
կար փառացդ աթոռոյ· խնդրն քակեցի
հելոյ, ու չունիմ սրտիկ շինելոյ։ Նամ
կեանքս իմ աչացն ելեր, այլ չունիմ ան-
ղէք խնդալոյ· դըրի զիմ մարմինս 'ի մահ,
զի չունիմ հոգի տանջելոյ։ Ա՛ մարդ որ
փառացդ հասար, տէր յերկրի եղար հա-
թոռոյ· դու համց շախացար 'ի քեզ, որ
չըրդնես դու մուհալ մարդոյ։ Մ'հ 'ի մահ-
ուանէ չունիս, ոչ ճարես պաշար գնալոյ·
Յիս փառքն այլոց լթողուս, կու լինիս
դու ափ մի հողոյ։

Լսեց խալիֆայն զայն իմաստուն բան-
քըն, և հարցանէր շատ բանս փահլու-
լին. և նա հնարիւք տայր զպատասխանին։
Նուքյալ 'ի մէկ օր մի հարցաւ խալիֆայն
ընդ փահլուլին և ասէ. փա՛հլուլ ասա՛
ինձ, այսօր ի՞նչ կանէ ա͞ծ. Ասէ փահ-
լուլն. այդ դիժար հարցմունք է. այսօր
համբերեսցես ինձ, վաղիւն ասեմ։ Երբեկ վա-
ղիւն, և հեծեալ էր 'ի սև յէշ մի։ Ասէ խա-
լիֆայն. ասա ինձ, ինչ կանէ ա͞ծ. Ասէ
փահլուլն. հրամայէ, որ ամէն ծառայքդ
'ի դուրս ելանեն, և ես տամ զպատաս-
խանին։ Նու հրամայեաց խալիֆայն ծա-
ռայիցն ելանել 'ի դուրս. և մնաց ինքն


փահ

փաՀլուլն մէն ։ Նա ասէ խալիֆայն․ ի՞նչ կու անէ ա̃ծ 'ի յայս ժամու։ Նա ասէ փաՀ_լուլն․ է՛ խալիֆայ՝ որ՛ պաՀ մի նստի 'ի յիմ տեղս, և ես 'ի քո յաթոռդ նստիմ․ նա տեսեմ քեզ թէ ինչ կանէ ա̃ծ ։ Նա Հայե_ցաւ խալիֆայն՝ որ մարդ չէր երևէր 'ի բոլորն, ելաւ նստաւ 'ի յէշն․ և փաՀլուլն 'ի խալիֆային աթոռն նստաւ, և ոչ խօ_սէր ։ Նա ասէ խալիֆայն․ յէ՛ր չես խօսիր, ի՞նչ կանէ ա̃ծ ։ Նա ասէ փաՀլուլն․ ինչ խօ_սիմ, չե՞ս գիտեր ինչ կանէ․ դու որ խա_լիֆայ ես, 'ի յէշս իմ նըստացուց․ և ես որ փաՀլուլ եմ, նա 'ի քո աթոռդ նստացուց․ ահա զայս արար 'ի ժամուս յայսմիկ․ և խալիֆայն զարմացաւ, և ոչ կարէր խօսիլ։

Նու ասաց փաՀլուլն զՀանքաւս զայս ։

Դու զա̃ծ քըննին յէ՛ր քըննես, երբ որ
միտքըդ իւրեան չՀասնի․ զա̃ծ ով կա_
րէ տեսնուլ, կամ իմանալ զնա մարդ կեն_
դանի ։ Նորա չես քո կենացըդ տէր, կու
մընաս դու յերկուց շըն՞չի․ այլ տէր Հայ_
րենեացս է նա, որ երկինք երկիր կու
տանի ։

Ծիծաղեցաւ խալիֆայն և ասէ․ փա՛ռք ա̃յ կենդանութեան և բարձրելոյն յաւի_տենին․ զի այս ցեղ խելս զարմանալի այ_



տաս

տախտն կուտայ · բայց թուի ինձ , թէ
չէ՛ դա խև , այլ խելօք է · և գնաց փահ_
լուլն : Եւ անցաւ օր մի քանի 'ի վեր · և
հրամայեաց խալիֆայն կոչել զնա : Եւ նա
նստաւ 'ի յէշ մի , և եկաւ առ խալիֆայն :
Ծիծաղեցաւ խալիֆայն և ասէ · փառք Այ
կենդանւոյն և բարձրելոյն յաւիտեան :
Եւ ասէ խալիֆայն · իրք մի կամիմ հար_
ցանել 'ի քեզ , և դու զուղղորդն տաս : Եւ
նա ասէ՝ հրամայեա՛ խալիֆայ : Ասէ խա_
լիֆայն · քանի՞ աստղ կայ 'ի յերկինքն :
Ասէ փահլուլն · ես աղէկ գիտեմ , զամէնն
համրեր եմ ասէ · որչափ իշուս վերայ մազ
կայ՝ նա այնչափ աստղ կայ 'ի յերկինքն ·
թէ չես աւատար՝ իջիր դու համրէ : Եւ ի_
ջաւ խալիֆայն յաթոռոյն , և սկսաւ համ_
րել զիշուն մազն : Ասէ փահլուլն · յառաջ
զագլին համրէ : Եւ սկսաւ խալիֆայն այն_
պէս առնել , և ոչ կարէր , ծիծաղեցաւ
խալիֆայն :

Եւ տաց փահլուլն զհարցմանս զայս :

Ա՛մ յերբ չեգիտես հիմայ , թէ գլխոյդ
մազըն քանի է · զէտ զիս փահլուլ յէր
լինիս , թէ յերկնից աստղըն քանի է :
Զինչ որ աստ գործել լինի , ամէնին հա_
մար տալոց է · որչափ զորկէ գանձ ժող
վէ ,

վէ, հոս թողու տանիլ չկարէ ։

Ամաչեց խալիֆայն, և ելթող զիշուն ա-
գինն 'ի համբելոյն, և ելաւ նստաւ 'ի յա-
թոռն ։ Նա ասէ փառք քեզ՝ որ այսպէս
գիտութեամբ պատուէ զխեղճս իւր և տայ
զիմաստութիւն սորա որ կամի ։ զոր ոչ որ կարէ
տալ նման պատասխանի 'ի բանս և 'ի հարց-
մունս իւր ։ Այսպիսի փորձք կեցեալ
փահլուլն՝ և երանելի կենօք փոխեցաւ-
յանվախճան թագաւորութիւնն 'ի
Ք͞ս Յ͞ս 'ի Տ͞ր մեր ։

Որում վայելէ փառք իշխանութիւն և
պատիւ ։ Այժմ և միշտ և
յաւիտեանս
Ամէն ։



Խրատ

Խորհուրդ և նախնեաց օգտակար:

# ԱՐՄ_ԲԵԱԼ. ՕԱՐՍԱ

Նաղան Թագաւորին՝ որ նուշ
լայլան ամն:

Այս ամին Թագ. մի ունէր ոսկի և պատ-
ուական ակներով. և շինած էր ի՞ի՞ ան-
կիւնով. և ամէն անկիւնի՝ այս նախնեաց Թ-
ներս գրած էր. և յորժամ նենէր ՚ի դուրս՝
նարդպայր առաջի զօրացն, և աւէր թէ՝
՚ի միտ առէք. և ապա դնէր ՚ի գլուխն:
Այս Թագն էր եախուսթ և զմրուխտ ա-
կամբ և ալմաստով և լաձիվարդ քարով
յօրինեալ:

Ա_

Ո ամենահզօր մարդն՝ յիմնել ՚ի զմտ այս
՚հնեցէք: Արժանաւորաց՝ իմ զանձեն



լու

բաժին տուէք ։ Անդէտ մարդկանց դէմ՝ անպատեհ խօսք մի՛ խօսիք ։ Զանգըտանելին՝ մի՛ փնտըրէք ։ Ի բանին՝ մի՛ արտորայք ։ Զբանն՝ ժամէ ՚ի ժամ մի՛ ձգէք ։

Բ.

Ի բանին՝ սկիզբն և ՚ի կատարածն հայեցարուք ։ Զոր տուն որ մտանէք՝ յառաջ զելն իմացարուք ։ Զամէն բան կամ կըտաւ՝ Է տալրայ չափեցէք, և ապա կտրեցէք ։ Զփորձածն՝ մի փորձէք ։ Զփորձածն՝ անփորձի մի տայք ։ Զմարդն՝ որ չէք փորձեր՝ նորա մի՛ վստահանայք ։ Զխոստումն որ ՚ի ձեզ է՝ մինչև ՚ի ձեր անձն մի՛ խնայէք ։ Սակաւ խոստացէք՝ և աւելի՛ կատարեցէք ։

Գ.

Անուանի և խոնարհ արուեստ ունիք ։ Զճշմարտութիւն սիրեցէ՛ք ։ Զկարողութիւն հարկիքն՝ գիտացէ՛ք ։ Զհամբերող մարդն՝ ճանաչեցէ՛ք ։ Զայս կեանքս՝ մի օր գիտացէ՛ք ։ Զառողջութիւն հարկիքն՝ գիտացէ՛ք ։ Զձեր կեանքն՝ անգիտութիւն մի՛ անցնէք ։ Ի յայլոց արատութիւն մի՛ խնդայք ։ Ընդ կորուածն՝ ընդ գնացածն՝ ընդ թափածն՝ ընդ այրածն՝ մի՛ տրտմիք ։



Ի

Դ·

'Ի մեծամեծաց յորոգայթն՝ կոծեցա_
րուք: Մարդկանց՝ ամենայն իրաց համ_
բերեցէ՛ք: 'Ի տեղի ուր համբերել պիտի՝
մի՛ ըշտապիք: 'Ի հետ ամէն մարդոյ՝ ոխա
կալ մի՛ լինիք: Ամէն մարդ՝ զիւր չափն
թող իմանայ՛: Զձեր զոտն՝ քան զձեր
անկողինն աւելի մի՛ մեկնէք: 'Ի պատե
րազմէ՝ երես մի՛ դարձընէք: Զայլոց
կռիւն՝ 'ի ձեր յանձն մի՛ առնուք:

Ե·

Կռիւ թէ հանդիպի 'ի ձեր մէջն, միջակ
արարէք, բայց շուտ հաշտեցարուք:
'Ի սրտներդ՝ նախանձ մի՛ պահէք:
Զամէն բան՝ համբերելով արարէ՛ք:
Սկիզբն նոր ընկելով արարէ՛ք՝ և ապա
զհինն խլեցէ՛ք: Զերեւելի զգայարանք
ձեր՝ պատրաստ պահեցէք: Անպատեհ
բաներուն՝ 'ի զատ կացէք: 'Ի մէջ մարդ_
կանց՝ վատ անուն մի՛ լինիք:

Զ·

'Ի գողունեաց ընչից՝ մի՛ շահիք: 'Ի յե_
ղեր թագաւորի՝ տուն մի՛ չլինէք, Զձեր
բնակութի՝ մօտ 'ի խանութ մի՛ չլինէք:
'Ի պիղծ մահալլէից՝ 'ի զատ կացէք:
Որք անխրատք են՝ իշխանաւորի թող ծա_
ռայ

ուղղութիւն չանեն։ Անընկեր՝ ՚ի ճանապարհ մի՛ երթայք։ Անարժանից՝ մի՛ խոնարհիք։ ՚Ի հետ չար կանանց՝ մի՛ դատիք։ ՚Ի յօտար հող՝ ծառ մի՛ տնկէք։

Ի.

՚Ի յաղթահատ տեղւոջ՝ սերմ մի՛ ցանէք։ ՚Ի հետ ամէն ազգ մարդոյ՝ մի՛ փաթթուիք։ ՚Ի նոր քսակ մարդուէ՝ փոխ մի՛ առնուք։ ՚Ի հետ անարժան մարդկանց՝ մի՛ նստիք։ ՚Ի հետ անհարկից՝ սէր մի՛ դնէք։ Ռամոս մարդկանց՝ մի՛ հաւատայք. և ՚ի հետ նոցա՝ աղուհաց մի՛ ուտէք։ ՚Ի հետ ծառայի մի՛ կռուիք՝ որ չամաչէք իւր տիրոջէն. և իւր աղայէն ՚ի զատ կացէք։ Զտեսած մարդոյ հետ՝ նիրհելութիւն մի՛ առնէք։

Ի.

Զղայն որ ՚ի մօրէն ցաւոտ ծնանի՝ իւրն դեղ մի՛ առնէք, զիրա փայտա չունի։ Անշահ մարդոյն և խելառին՝ հարցածին խրատ մի՛ տայք։ Դուք զձեզ՝ մեծ մի՛ տեսնուք։ ՚Ի լեզուանի կնոջէ՝ պատրաստ կացէք։ Ով որ զխրատն սիրէ՝ այնոր տուէ՛ք։ Ուտելն և զխմելն՝ մինակ մի՛ սիրէք։ Ձեր հացանդելոցն՝ կիւճ մի՛ անէք։ Ձեզ սիրողն՝ մի՛ ատէք։ Ով որ ՚ի

ձեր հետ սէր ունի՝ զնա անտես մի՛ առնէք ։ Անպատեհ պատճառէ՝ զծառայն ձեր մի՛ ծեծէք ։ Ի յայլոց հացն աչք մի՛ ձգէք ։

Թ.

Զձեր հացն՝ յայլոց սեղան մի՛ դնէք , Այլ զձեր հացն ուտէք՝ զձեր զոյգն տեսէք ։ Տղայոց և ճահիլից հետ՝ թէպտիր և մուշավէրէ մի՛ անէք ։ Զօտար կին և պառաւ՝ ի ձեր տունն մի՛ թողուք ։ Ի չար կնոջ խիլաթէ՝ պատրաստ կացէք ։ Զձեր հոգին՝ ձեր մարմնոյն ծառայ մի՛ անէք ։ Ի ձեր որդւոց և դստերաց՝ մինն մի՛ տրտմէք ։ Ի յօտար բան՝ մի՛ վստահանայք զերդ փորձած ։

Ժ.

Զայգին ձեր ի պահ օտարի՝ մի՛ տայք ։ Ի յայլոց ապրանք խէրև ըզտէրն իւր՝ մի՛ վստահանայք ։ Ի յօտար մարդոյ տուն՝ տանուտէրութի մի՛ առնէք ։ Զօտարին որ չէք ճանաչեր՝ ի ձեր տունն տանուտէր մի՛ դնէք ։ Այն մարդկին որ զայս կեանքս խիստ կու սիրեն՝ դուք զնա մի՛ սիրէք ։ Ան և կնոջ՝ ծառայի և պարոնի՝ շառ մի՛ ձգէք ։

ԺԱ.

Առ թագաւորին ահարկու և պատրաստ

կացէք ։ Ստացաւորն թէպէտ խոնարհի՝ դուք մի՛ համարձակիք ։ Իշխանաւորն սակաւ սիրեցէք՝ բայց՚ի ղէյպէթն զինքն մեծ սիրեցէք ։ Ախտակալ մարդկանց՝ ՚ի զատ կացէք ։ Ամէն մարդոյ՝ հարկիքն իմացէք ։ Ընդ բախտաւորին և ընդ տօվլաթաւորն՝ մի՛ նախանձիք ։ Ընդ իմաստունն՝ մի՛ դէմ առնէք և քամահէք ․ զի նոքա տէր են դրչի և իմաստութե ։ Այն որ որք գիտունք են՝ զնո թեթև մի՛ տեսնոյք ։ Թէպէտ դուք իմաստուն էք՝ այլ քան զձեզ աւագն մի՛ համարէք ։ Ընդ հանճարեղին՝ մի՛ վարիք ։ Այն որ որ ծերք են՝ պատուեցէք և գաւազան լերուք նց ։ Ի բանաստեղծ մարդկնց՝ ՚ի զատ կացէք ։ Դուք զմարդն՝ ծաղր և տընազ մի՛ առնէք ։

## ԺԲ․

Զծերքն՝ հարկօք սիրեցէք ։ Զմեծն՝ մեծ սիրեցէք ։ Զխաբեուսիկն կտրեցէք՚ի միջոյ՝ որ անհոգ կենայք ։ Ի հետ ժլատի և ոչ ինչ մարդկանց՝ մի՛ դատիք ։ Զհօր և զմօր՝ և զազգի հարկիքն՝ մեծ տեսէք ։ Ի ձեր մօտ ազգէն՝ մի՛ կտրիք ։ Ի մեկ հետ մրդոյ՝ մի՛ տայք զձեզ կրանել ։ Զերդումն և զպայմանն՝ որ է ահթ ուամանն՝ մի՛ կոխէք ։ Ընկոչ՝ ՚ի պատիւ մի՛ երթայք ․



Յամ

ԺԳ.

Յո̄ժ աւուրս ձեր՝ խորատիճ և իմաստութե̄ կացէք։ Մինչդեռ և դուք չար լինիք՝ զաղէկն սիրեցէք։ Իսկ թէ աղէկ լինիք՝ զչարն մի՛ բամբասէք։ Ատ մարդկանց սըրաթին՝ մի՛ օգնէք։ Ի սիրելւոյ և՛ի ղարմն՝ զգութ մի՛ վերցնէք։ Ի հետ պիղծ մեռելի՝ զձեր մեռելն մի՛ դնէք։ Ուսումն և խելք ունիք։ Ի խորատէ մի՛ ամաչէք։ Ի մէջ մարդկանց՝ քան զբարին այլ բան մի՛ խօսիք։

ԺԴ.

Ո՛վ քան զձեզ աղէկ է և գիտուն՝ զինքն մեծ տեսէք։ Իսկ այլ իրաց՝ քան իմաստութեանց բանից, այլ բանի խնդրող մի՛ լինիք։ Մինչ իմաստութիւնքն հեռի են՝ դուք գնացէք իւրեանց մօտն։ Զանցեալ ժամանակն՝ հեշտ մի՛ համարիք։ Զինչ որ յո̄ս չունիք՝ ի մարդուէ մի՛ խնդրէք և մի՛ քընքըրչէք։ Մինչ կուզէք որ անհոգ մընայք՝ աղէկ արուեստ ունիք։ Բան մի որ ի պահ առնուք՝ ի տ̄րն հաւատացէք։ Փոխ որ առնուք՝ վճարեցէք։

ԺԵ.

Խօսք որ ի խելաց չէ՝ մի՛ խօսիք։ Խօսք որ ասելու չէ՝ մի՛ ասէք։ Զլեզուն ձեր՝ ի



չար

չար ամենի մի՛ սովորեցընէք։ Անպատեհ խօսից՝ մտիկ մի՛ դնէք։ Պիղծ խօսից՝ պատասխանի մի՛ տանէք։ Թագաւորաց՝ յոյս մի՛ դնէք։ Ամէն որ՝ թող իւր արուեստն մշակի։ Ինչ որ լսէք զպատասխանին՝ ստուգեցէք։ Զբանն որ չգիտնայք՝ մի՛ ասէք։ Զինչ բան որ ՚ի ձեր սիրտն չկայ՝ զայն լեզուաւ մի՛ խօսիք։

ԺԶ.

Ամենայն մարդոյ խօսից՝ մի՛ վստահանայք։ Զբարի խօսքն՝ յամէն մարդոյ ընդունեցէ՛ք։ Ո՛չ իրաւ և ոչ սուտ՝ մի՛ երդնուիք։ Զայն կեանքն՝ ընդ այս կենցաղոյս մի՛ փոխէք։ Ամէն մարդոյ զայն կամեցարուք՝ զինչ որ ձեր անձինն կուզէք։ Որբերոյ իրք՝ մի՛ խնայէք։ Երկայն ճանապարհի՝ պաշար պատրաստեցէ՛ք։ Այրեաց՝ հանապազ ողորմեցէք։ Կարճուն ժամանակն՝ զծերութիւնն ՚ի միտ բերէք։ Զծերութեանն՝ ՚ի կարճուն ժամանակն հոգացէ՛ք։

ԺԷ.

Ի ժլատութէ փախիք։ Առատութե՛ արուեստ ուսիք։ Սկիզբն առատութեան՝ ՚ի ձեր հալալ արդեանցն արարէ՛ք։ Զմարդկութէ կերպն՝ ճանաչեցէ՛ք։ Ի հետ հարկաւորաց՝ սէր դրէ՛ք։ Ի ցածէն և յան-



գի

գիտէն՝ խնդիր մի՛ խնդրէք: 'Ի հետ ամէն մարդոյ՝ սէր և հարկաւորութիւն ըստ ժամանակին արէք: Զպատուականն՝ պինդ-բռնէք:

ԺԲ.

Զմտաւն զախտիսն՝ յամառն հոգացէք: Զայս աւուր բանն՝ 'ի վաղն մի՛ ձգէք: Բանն՝ որ եղած չէ՝ զէտ եղած մի՛ ձևէք: Զդեղն՝ յառողջութեան ժամու խմեցէք: Զհաճամնաթն՝ 'ի յատենն առէք: Յորժեր լինիք՝ կորձութեան մի ցանկայք: Զբանդետ մարդն՝ 'ի վերայ բանի դրէք: Զճահիլն և զերկչոտն՝ 'ի վերայ մեծութեան մի՛ դնէք: Ածք որ ոխս պահեն՝ փախերուք 'ի նոցանէ: Ամէն իրաց՝ շուտ մի՛ հաւատայք: Զձեր ընտանիքն՝ սիրեցէք:

ԺԳ.

Ընդ հետ ուղղորդ սիրելեաց՝ քիթ 'ի վեր մի՛ կենայք: Զաղքատսն ձեր՝ մի վիրաւորէք: Մի՛ թողուք զձերայինսն՝ և 'ի յօտարն չփանայք: Զձեր հին սիրելին՝ մի՛ մոռանայք: Զձեր թշնամին՝ խիստ մի՛ արհամարհէք: Իմաստուն թշնամւոյ՝ խիստ մի՛ վախենայք: Զանդէտ սիրելին՝ մեծ մի՛ գիտնայք: 'Ի թշնամութեան՝ սիրոյ տեղի պահեցէք: 'Ի սիրելութեան ժամու՝ ըզ

թշնա

թշնամութ՟ի յիշեցէք։ Ծուլութե՟ արուեստ մի՛ ուսանիք։ Զձեր սիրելին՝ յաղքատութե՟ ժամն փորձեցէք։

Ի

'Ի հետ գիշաւորին՝ մի՛ գիշանայք։ Ամէն մարդ՝ թող զիւր չափին վայելէ։ Աշխարհն՝ ձեզ խաղաղ թող չթուի։ Զհոգւոյ բաժինն 'ի մարմնաւորս՝ մի՛ մոռանայք։ Զտղայն ձեր՝ հնաւորութե՟ արուեստ ուսուցէք։ Զձեր կերպարանն՝ 'ի սիրելեաց և 'ի թշնամեաց ծածուկ պահեցէք։ Զձեր խորհուրդն՝ ամէն մարդոյ մի՛ ասէք։ 'Ի տեղի ուրուք՝ ականջ մի՛ դնէք։

ԻԱ

Զձեր խորհրդակիցն՝ 'ի ժամանակի բարկութե՟ փորձեցէք։ Զկին և զորդիս՝ 'ի ժամանակի աղքատութե՟ մի՛ ուրանայք։ Ու մեծամեծքն՝ աչք 'ի բաց կացէք։ Ամէն իրաց՝ զչափն սիրեցէք։ Զհպարտութի՝ քան ըղմանն այլ դառն իմացէք։ Զանհոգութի 'ի ձեզ՝ անկենդանութի գիտացէք։ Ընկեր զայն սիրեցէք՝ որ իւրմէն իրք մի՛ շահէք։

ԻԲ

'Ի ժամանակի անհոգութե՟՝ քան 'ի նեղութե՟. ժամանակն այլ խիստ պատրաստ

կացէք ։ Ո՛վ ամէն բան՝ ՚ի յառաջութենէ ժամու հոգացէք ։ ՚Ի յաժմնութեան զթան_կութիւն յիշեցէք ։ Երբ առողջ կենայք՝ զհիւանդութիւն ՚ի միտ ածէք ։ Ո՛վ աղջիկն կամ զկին՝ ՚ի ճանաչ տեղաց առէք ։ Ո՛վ մարդ մէկ հեղ տեսնելով՝ մի՛ փա_թըլթուիք ։ Մնշան սիրելեաց՝ ՚ի զամտ կացէք ։

Եւ Վ͞ռի մարդասիրին՝ փառք յաւի_տեանս յաւիտենից
Ամէն ։

## Խրատք պիտանիք և օգտակարք · զոր ասա_ցեալ Խիկարայ իմաստոյ ։

## ԵՍ ԽԻԿԱՐՍ ԴՊԻՐ

էի սենեքերիմայ արքային ասո_րեստանեայց · և արարի Կ̄ կին · և շինեցի Կ̄ ապարանս · և ես խի_կարս եղէ Կ̄ ամաց, և ոչ եղև ինձ որդի ։ Յայնժամ մտի առ կուռսն բազում ըն_ծայիւք · և վառեցի հուր, և արկի խուն_կըս անուշահոտս ՚ի վ͞ր ն͞ր · մատուցի զըն_ծայս, և զոհեցի զոհս վ͞ս ծննդեան ։ Եւ

աղա

աղաչեցի ասելով, ո՜վ տեարք իմ և չաստուածք
իմ բերել զիմ և շահ միմ, հրամայեցէք և տուք
ինձ որդի զաւակ. քանզի ահա Խիկարս
կենդանին մեռանի։ Եւ զինչ ասեն մար-
դիք, թէ Խիկար իմաստուն էր և ճար-
տար. մեռաւ և ոչ կայր նորա որդի, որ թա-
ղէր զնա. և ոչ դուստր, որ լայր զնա.
զինչ ասեմ, չունիմ ժառանգ յետ մահ-
ուան իմոյ։ Եւ եթէ որդին իմ յորն Ճ
քանքարս ծախեսցէ, ոչ կարէ սպառել
զինչս իմ. այլ զի միայն արկցէ հող ձե-
ռօք իւրովք ՚ի վերայ իմ. և զի մի մնացայց
անյիշատակ։

Յայնժամ ձայն եղև ՚ի չաստուածոցն իմոց և
ասէ. Խիկար, ոչ հրամայեալ է լինել քեզ
զաւակ. բայց թէ առցես զնաթան քեռ
որդին քո, և սնուսցես զնա որդի քեզ. և
նա հատուսցէ քեզ զսնունդ քո։

Եւ ապա առի զնաթան քեռ որդին իմ
առ իս, որ էր ՚ի մի ամի. և հագուցի նմա
բեհեզս և ծիրանիս. և եդի մանեակ ոս-
կի ՚ի պարանոց նորա որպէս որդի թագաւորի.
գեղաշուք զարդարեցի զնա. և արբուցի
նմա կաթն և մեղր. և ննջեցուցանէի զնա
՚ի վերայ արծուոց և աղուենեաց իմոց, մինչև
եղև Է ամաց։ Եւ ապա սկսայ ուսուցա-
նել

նել նմա զդպրութի̃ և զիմաստութի̃ և զհան_
ճարագիտութի̃, և զպատասխանիս հրովար_
տակաց, և զդարձուածս հանկարծակի խօ_
սից. և՛ի տուէ և՛ի գիշերի ոչ դադարէի
ուսուցանելոյ. և յագեցուցի զնա ու_
մամբ իբր հացիւ և ջրով:

Ապա ասէ արքայն առ իս՝ դպիր և իմաս
տուն խիկար. գիտեմ, զի ծերացեալ ես.
և յետ վախճանի քոյ ո՞վ է, որ կատարէ
ճարտարութ̃ և իմաստութ̃ զգործս ար_
քունեաց մերոց. և ես հանապազ տրտում
եմ վ̃ այդ խորհրդիդ:

Պատասխանի ետու նմա և ասացի:
Արքայ՝ յաւիտեան կաց. է՛ իմ որդի՝
որ առաւել հանճարեղ և իմաստուն է
քան զիս: Ասէ թագաւորն. ած՝ դայ ա_
ռիս՝ զի տեսից զնա: Իսկ իբրև ածի զնա՝
կացուցի զնա առաջի թ̃գ̃ւորին: Յորժամ
ետես թագաւորն, ուրախ եղև և ասէ.
այս օրս օրհնեալ եղիցի. քանզի խիկար՛ի
կենդանութե̃ իւրումն էած և կացոյց զոր_
դին իւր առաջի իմ, և ինքն՛ի հանգըս_
տեան եղիցի: Իսկ ես երկրպագի ար_
քային իմոյ, և առեալ տարայ զնաթան
յապարանս իմ. և այսպէս ասէի ՛ի խրա_
տելն իմում:

 Խոր

Խրատ Խիկարայ՝ զոր ետուր որդւոյն իւրոյ Նաթանայ ։

Որդեակ՝ եթէ լսես խօսք 'ի դուռն թագաւորաց և իշխանաց և մեծամեծաց, պահեա և մեռո՛ զնա 'ի սրտի քում. և մի՛ ասեր մարդոյ, մինչև այլքն ասեն 'ի քեզ ։

Որդեակ՝ զմարդոյ կապած և մօհրածն մի՛ արձակեր. և զարձակեալն մի՛ կապեր ։

Որդեակ՝ լաւ է իմաստուն մարդոյն հետ քար կրելն քան զանգետին հետ ուտել և խմելն ։

Որդեակ՝ մի՛ լիցի. զի առաքեսցեն զքեզ 'ի բան, և դու ոչ իմանաս զբանն՝ և երթաս. յետոյ այլ ոք ուղարկեն՝ որ երթայ 'ի բանն, և դու ծաղր լինիս ։

Որդեակ՝ մի՛ այնպէս աներ՝ որ երթաս 'ի տեղ մի, և՛ 'ի քեզանէ մեծ մարդոյն 'ի վեր նստիս. որ չասեն, թէ եկո՛ւ 'ի վայր, որ յամօթ լինիս. 'ի վայր նիստ՝ որ ասեն՝ թէ եկո՛ւ 'ի վեր ։

Որդեակ՝ թէ ընկերն քո հիւանդ է, մի՛ ասեր 'ի միտքդ, թէ տանծ կամ խնծոր գտնում, և ապա երթամ 'ի տես. երթ ոտիւք՝ և տե՛ս աչօք. զի զհիւանդն դատարկ տեսանել շատ լաւ է՝ քան զլրա֊



զուամ

զում կամակս ուտելոյ ։

Որդեակ՝ մի՛ հեղուր զարիւն մարդոյ, զի մի՛ այլքն հեղցեն զարիւն քո ։

Որդեակ՝ մի՛ շնար ընդ այլոց կանանց, զի մի՛ այլք շնասցեն ընդ կնոջ քոյ ։

Որդեակ՝ լաւ է ծառայքն միամտութ̃ տալ պատասխանի տ̃ն իւրում, քան զոր խորամանկելով խօսի, և ածէ 'ի բարկութ̃ի ։

Որդեակ՝ մի՛ տար ընկերի կոխել զոտս քո, զի մի՛ համարձակեսցի և կոխեսցէ զպարանոց քո ։

Որդեակ՝ մի՛ լինիր քաղցր որ կլանեն զքեզ. և մի՛ լինիր լեղի որ թքանեն զքեզ ։

Որդեակ՝ լաւ է կոյր աչօք՝ քան կոյր մտօք. զի կոյրն՝ արագ տեսանէ զերթ և եկն ճանապարհին. և մտօք կոյրն՝ հանապազ գնայ կամակոր ։

Որդեակ՝ լաւ է աղջիկ՝ որ ծնանի և շուտ մեռանի, քան թէ ապրի, և աղգին իւրոյ սև երեսանք բերէ ։

Որդեակ՝ լաւ է կողմ 'ի ձեռին քում, քան թէ չորեք 'ի յայլոց ձեռսն ։

Որդեակ՝ լաւ է ուլ մի 'ի ձեր տանն զենած, քան թէ եզ մի 'ի տունս այլոց ։

Որդեակ՝ 'ի յապարանս թագաւորաց մի՛ մտաներ. և ը̃ կնոջ դատաւորի մի՛ խօսիր ։



Որ

Որդեակ՝ աչք մարդոյ ագա՛հ է, ո՛չ կըշտանայ գանձով՝ մինչև լցցի հողով:

Որդեակ՝ ընդ մարդոյ կնոջ մի՛ խնամախօսիր․ զի թէ գէշ լինի՝ անիծանեն զքեզ․ և թէ աղէկ լինի՝ ո՛չ յիշեն զքեզ:

Որդեակ՝ յորժամ դատաստան երթաս, մի՛ շատախօս լինիր․ և մի՛ ծուռ զրուցեր, զի մի՛ սուտ հանցեն զքեզ՝ և մըտնուս 'ի զընտան:

Որդեակ՝ յառաջ զխօսքն 'ի միտքդ խորհիր․ թէ սուտ ես՝ մեղա՛յ ասա․ զի մի՛ դատաւորն արկցէ 'ի բանտ, և թալանէ զինչս քո:

Որդեակ՝ զմարդն որ 'ի կախել տանին՝ մի յառաջ ն՟ր ընթանայր, զի մի՛ մատնէ զքեզ և ասէ, թէ սա այլ իմ ընկեր է:

Որդեակ՝ յորժամ երթաս 'ի հարսանիս կամ 'ի մահատուն՝ յառ՟ջ հաց կեր՝ 'ի տունըդ, և ապա գնա․ զի թէ հարսանիս է՝ 'ի շատ խնդուէն հոգ չանեն զքեզ․ և թէ մահատունն է՝ 'ի շատ տրտմուէն մոռանան զքեզ, և դու մնաս անօթի:

Որդեակ՝ կամուրջ մի հեռի գնալ անցանել լաւ է, քան մըտանել 'ի ջուր մօտիկ:

Որդեակ՝ նոր դատաստան մի՛ սահմաներ անիրաւութ՟․ թէպէտ և իշխան լինիս՝ 'ի

սահ

սահմանէ 'ի դուրս մի՛ ելնուր ։

Որդեակ՝ մի՛ բանար զաչս քո և տեսանէր զկին գեղեցիկ . զի դեղեալ է զերեսն՝ և ծարուրել է զաչսն . և թէ վատնես զա̃մ ինչս քո 'ի սէր նր̃՝ ոչ ինչ առաւել գտանես՝ քան զկինոջ քոյ . բայց միայն ըղմեղքն և զսև երեսութի̃ն ։

Որդեակ՝ թէ տեսանես զերիտասարդ մարդն թռուցեալ յօթս՝ մի՛ հաւատար գործոց նր̃ . զի բան ծերոց հաստա՛տ է . բայց երիտասարդ որդւոյն՝ ո՛չ ահա օրինակ սորա ասացեալ է , թէ իբր բերան աւիծու՝ որ զերծուցանէ զնա ։

Որդեակ՝ թէպէտ և որդին քո իմաստուն է՝ յառաջագոյն փորձեա՛ զնա , և ապա տուր զինչս քո 'ի ձեռն նր̃ ։

Որդեակ՝ 'ի կնոջէ յօտարէ և'ի հարսնացընէ՝ քան զընկերսն յառաջ ե՛լ և գընա՛ . և այլ մի՛ դառնայր՝ որ հարկաւոր լինիս . ապա թէ դառնաս՝ փոխարէն հարկացդ առնուս անարգութի̃ ։

Որդեակ՝ ո՛վ որք քան զքեզ պինդ երես է , մի՛ հակառակիր ընդ նմա ։

Որդեակ՝ թէ բարձր է տան շէմն քո առաւել քան թ̃ կանգուն այլ՝ որ մտանես խոնարհեցո՛ զգլուխ քո ։



Որ

Որդեակ՝ մի՛ առնուր կշռով մեծ՝ և ծա-
խեր փոքր, և ասեր 'ի սրտի քում թէ շա-
հեցայ. և ոչ գիտես՝ որ փոխանակ 'ի յայն
փոքր շահուն, բարկանայ Ա̃ծ. և զոր ունիս՝
առնու 'ի ձեռաց քոց, և տայ այլոց ։

Որդեակ՝ մի՛ երդուիր և մի՛ ասեր սուտ.
զի սուտ երդումն և սուտ ասելն՝ զմար-
դոյ կենաց պակասութի̃ բերէ ։

Որդեակ՝ եթէ կամիս խնդրել բանս ինչ
յա̃յ՝ 'ի կամաց նր̃ մի՛ հեռանար. և զոր
խնդրես՝ տացէ՛ քեզ ։

Որդեակ՝ քեզ զի՛նչ բան որ չա՛ր թուի՝
ընկերին քում մի՛ առներ. և զոր ինչ բարին է
կատարէ. և արասցես քեզ բարեկամ. և
դու յա̃մեցունց բարի գտցես ։

Որդեակ՝ յորժամ լինիս 'ի մէջ մարդկան՝
մի՛ յայտներ զպարտքդ և զպակասութի̃դ
քո. զի 'ի նոցանէ շահ ոչ լինի քեզ. և
դու արհամարհիս 'ի մէջ նոցա ։

Որդեակ՝ սիրեա՛ զկին քո, զի մայրմին
քո է. և աշխատանօք սնուցանէ զորդիսն
քո, և կցորդ կենաց քոց է ։

Որդեակ՝ սիրեա՛ զեղբայր քո հաւասար
ընդ քեզ. զի 'ի հասանիլ որդւոց քոց՝
խնդասցես ։

Որդեակ՝ ուսո՛ զորդին քո 'ի քաղցր և'ի



ծա

ծարաւ, զի ուսանիցեն համբերել նեղու-
թե՟. և յորժամ հանդիպի ժամանակ սո-
վոյ՝ կարասցեն ժուժկալել:

Որդեակ՝ մարդոյ գործք՝ որ ոչ է բարի՝
և չունի անուն բարի Տ՟ի, լաւ է մարդն
այն մեռած. քան թէ կենդանի:

Որդեակ՝ յորժամ լինիս այլոց տան հիւր՝
եթէ օձ և կարիճ բերեն առաջի քոյ մի՛
քալէջեան, և մի՛ գանկատիր:

Որդեակ՝ մի՛ ասեր չար բարեկամին քոյ.
այլ ծիծաղեա՛ ընդ երես ն՟ր. և դու ու-
րախ լինիս 'ի մէջ ընկերաց քոց:

Որդեակ՝ զա՟մ բարութի՟ կնոջ քոյ արա.
բայց զխորհուրդ սրտի քոյ մի՛ յայտներ.
զի կինն բնութ՟ե տկար է, և ոչ կարէ պահել
զբանն քո. այլ յայտնէ դրացեաց քոց, և դու
անկանիս 'ի փորձանս և 'ի նեղութի՟:

Որդեակ՝ մին ապրանք՝ որ քո չէ, մի՛
առնուր և տար այլոց:

Որդեակ՝ խորհեա՛ զբանն 'ի սիրտդ.
ընտրեա՛ զպիտանին, և ապա բեր 'ի լե-
զուդ և խօսիր. և թէ զինչ գայ 'ի բե-
րանդ խօսիս՝ նա ծաղր լինիս:

Որդեակ՝ երկու մարդ ընդ կռուին և
ընդ ծեծուին՝ 'ի մէջ ն՟ց մի՛ անկանիր,
զի մի՛ 'ի զուր մեռանիցիս:



Որ

Որդեակ՝ մի՛ դատարկաբանութ̃ի խօսիր և ծիծաղիր. զի մարդն 'ի նուաղելոյն կռիւ լինի. և 'ի կռուոցն ըսպաննութ̃ի:

Որդեակ՝ թէ կամիս իմաստուն լինիլ՝ պահեա զլեզուդ քո 'ի չար խօսից:

Որդե̃կ՝ թէ կանչելով մարդ տուն շինէր՝ նա էշն օրն ութն դարպաս կու շինէր. և թէ 'ի սաստիկ զօրութ̃է եզին վարի լուծն՝ նա 'ի պարանոցէն ոչ ելանէր:

Որդեակ՝ թէ աղքատ ես, յա̃մ աւուրս պատարագաց ա̃յ մի՛ հեռանար:

Որդեակ՝ մի՛ տացես տղրանք առանց գնի և վկայի. զի բազում խօսք լինի և 'ի բուն բարեկամէն քակտիս:

Որդեակ՝ պատուեա զհայր քո և զմայր. զի 'ի հասանիլ յորդւոց քոց՝ առցես և դու զնոյն:

Որդեակ՝ շալկեցի արճիճ և երկաթ, չէ՛ր ծանր քան զպարտքն. թէպէտ ուտէի և ըմպէի՝ ոչ կարէի հանգչիլ մինչև վճարէի:

Որդեակ՝ մեծատան որդին թէ օձ ուտէ՝ կասեն թէ վ̃ա բժշկութ̃ե կերաւ. և թէ աղքատն ուտէ՝ կասեն թէ սովալլուկ մեռանելոյն կերաւ:

Որդեակ՝ լաւ է գողոց տալ զա̃մ ինչս քո, քան թէ գտանեն մէկ գողութի 'ի վ̃ր քո:

Որդեակ՝ ընդ թշնամւոյն կորըստեան մի՛ խնդար. զի առաջի քո մահ կայ։

Որդեակ՝ յորժամ տեսանես զծերն, յոտն կաց և պատուեա՛ զնա. զի և այլք զնոյն արասցեն քեզ։

Որդեակ՝ թէ դադարի գետն ՚ի գնացից՝, կամ քաղցրանայ ոչ զմեղու, և կամ սպիտակի ագռաւն ոչ պղղաւնի՝ նա այնպէս թողու անզգամն զանզգամութիւն իւր. կամ անմիտն՝ լինիլ զգայուն։

Որդեակ՝ մի՛ յաճախեր ՚ի տուն բարեկամին քո, զի մի՛ յագեալ ատիցեն զքեզ։

Որդէկ՝ օրինաց այ ունկնդիր լեր. զի պատուիրանն այ ամուր պարիսպ է մարդոյ։

Որդեակ՝ սովորեցո՛ զլեզուդ քո՝ զբարին խօսիլ ՚ի մէջ ընկերաց քոց։

Որդեակ՝ թէ խրատ բարի տացես, դու իմաստուն կոչիս. զի չարն՝ հանապազ ՚ի չար մարդէն ծնանի։

Որդեակ՝ թէ կամիս զգործս ինչ բարիս գործել՝ յառաջ մի՛ պարծիր. լինի թէ չլինի, կամ չկարենաս գործել, և ծաղր լինիս։

Որդեակ՝ մի՛ ցանկանար մարդոյ արեան. և մի՛ սիրեր զկռիւ. այլ սիրեա՛ զխօսք կակուղ. և խօսք՝ որ շիջուցանէ զհրաբորբոք գազանացեալ սիրտ մարդոյ։

Որդեակ՝ յորժամ խմես գինի՝ մի՛ շատախօս լինիր. զի ՚ի շատ խօսից կռիւ լինի և յետոյ խռովութի̃ և սպանութի̃։

Որդեակ՝ խաղաղութի̃ն մայր է ա̃մ բնական ողջունի խոնարհութե̃։

Որդեակ՝ մինչ կօշիկդ ՚ի յոտքդ է՝ կոխեա՛ զփուշն. և արա՛ ճանապարհ ընկերի քում, որ ընդ քեզ է գալոց։

Որդեակ՝ ջանա՛ և շահիր անուն բարի. զի լաւ է մարդոյն անուն բարի, քան թէ զգեղ գովելի. զի գեղեցկութի̃ն հիւանդութե̃ և մահուամբ ապականի. և անուն բարի յաւիտեան մնայ։

Որդեակ՝ թէ հանդիպիս կնոջ անզգամի՝ ճաղանդիր նմա, և կամ փախիր ՚ի նմանէ։

Որդեակ՝ ՚ի լեզուէ քումմէ վախցիր քան զօտար թշնամւոյ. զի այլ ոք ոչ կարէ հարկանել զքեզ՝ եթէ ոչ նա։

Որդեակ՝ լաւագոյն է քեզ թշնամութի̃ ընդ առն իմաստնոյ, քան թէ սիրելութի̃ ընդ առն անմտի։

Որդեակ՝ զայր անմիտ և արբեցող ՚ի բանս մի՛ ղրկեր. և թէ կուզես որ բազում չարիս ածէ ՚ի վերայ քո՝ ուղարկեա՛։

Որդեակ՝ անմիտ մարդոյ խրատ տալն այնպ̃ս է, ո̃պ թէ ոք փոշի ցանէ ՚ի գնացման գետոյ։



Որ

Որդեակ՝ զչար և զանմիտ և զլեզուա_
նին և զա՛մ ամբարհաւաճ մարդն, 'ի քո
տունն մի՛ մուծաներ. զի 'ի գործոց նր
ամօթով գտանիս։

Որդեակ՝ թէ լինիս տէր ոսկի, զմահ քո
մի՛ մոռանար։

Որդեակ՝ ա՛ծ զգինի վն ուրախութե. բայց
տես՝ մի՛ լինի թէ ըմպէ գինին զքեզ։

Որդեակ՝ փառաւոր առնէ երբեմն գի_
նին զմարդն. և երբեմն յամօթալից և
ծաղր առնէ։

Որդեակ՝ լաւ է կռուիլ քեզ ընդ մարդոյ
զինաւորի, քան թէ կնոջ անզգամի։

Որդեակ՝ մարդ չարաբարոյ և ամբար_
տաւան՝ յորժամ տեսանէ զկուրութի
ընկերի իւրոյ, ցնծայ և ուրախ լինի. և
կարծէ 'ի մտի իւրում թէ, փառս ինչ
յաւելաւ 'ի նմա։

Որդեակ՝ յորժամ քաղցրանայ առջ այ
'ի վր քո՝ առ աւել երկնչիր 'ի նմանէ. զի
յետև մեղադրես յանձին քում։

Որդեակ՝ յորժամ տեսանես զքեզ առ
աջս տն այ քո՝ թագաւորաց փառաւո_
րելի եղեր, և ամ մարդ սիրէ զքեզ. և
յորժամ արհամարհիս յայ՝ յայնժամ
թագաւորք և իշխանք և ամ սիրելիք քո
ատեն զքեզ։



Որ

Որդեակ՝ մի՛ ասեր աղքատին, թէ դու ինձ չար ոչ կարես առնել. տե՛ս, զի բազում չարիք և անարգանք յոչինչ մարդկանէ ելանեն, և յո՛չ պատուական մարդկանց։

Որդեակ՝ կին օտար որ սիրէ զքեզ, և ասէ թէ դու լաւ ես քան զիմ այրն՝ մի՛ հաւատար նմա. զի կին պոռնիկ նման է շան՝ որ խառնակի ընդ ա̃մ շանց։

Որդեակ՝ մի՛ վախցուցաներ զխրատդ քո 'ի հետ նոր բռնած սիրելւոյդ՝ մինչև քանի մի ինչ անգամ փորձես զնա չարեօք և բարեօք։

Որդեակ՝ կին պոռնիկ նմանէ գերեզմանի բռնելոյ, 'ի ներքս լի՛ է գարշահոտութ̃ե։

Որդեակ՝ մի՛ լրբալեզու լինիր 'ի մէջ ընկերացդ, և կարծեր թէ սիրելի ես նց̃. այլ յորժամ յանդիմանեն զքեզ՝ լինի բան քո ամօթալից.

Որդեակ՝ որ պայծառ է միտք՝ իբրև զարեգակն լուսաւոր է. և որ պիղծ է սըրտիւ̂ և նենգ է միտք և խաւար է խորհրդովք, կամ ագահ միտք՝ այնպիսի մարդն թէպէտ և ունի ինչս բազումս, ունայն է և կենդանի մեռեալ.

Որդեակ՝ յաւուր զոհից քոց առատ բռնէ զձեռքդ, որ աչք մարդոյն 'ի ձեռն



քո

քո չմնայ · քանզի ո՛չ հաճի ա̃ծ , և դու
՚ի մարդկանէ անարգիս ։

Որդեակ՝ մի՛ն ձի՝ որ քո չէ՝ մի՛ հեծնուր · և կամ յոյժ քաղցեալ իցես՝ հաց՝ որ քո
չէ՝ մի՛ ուտեր ։

Որդեակ՝ յայտնեա՛ զխորհուրդ քո բա-
րեկամին քոյ · և յետ քանի մի աւուրց փոր-
ձեա՛ զնա , և սակաւ մի կռուի՛ր ընդ նը-
մա · Թէ որ պահէ զբան քո ՚ի սրտի իւ-
րում, և ո՛չ յայտնէ՝ նա սիրելի բարեկամ
քո է , զնա սիրեա՛ յոյժ · և Թէ ընդ կռու-
ուի՛ն յայտնէ զբան քո՝ նա այնպիսին չէ՛
սիրելի և բարեկամ, փախի՛ր ՚ի նմանէ ։

Որդեակ՝ ագահութի̃ն մայր է ա̃մ չարեաց
և ծնուցիչ ա̃մ մեղաց · բայց ողորմութի
ձեռնատու է ա̃մ բարեաց ։

Որդեակ՝ որ սիրես զխաղաղութի̃ , ՚ի դա-
տաստանէ պատրաստ կաց · և որ համա-
պաղ յօժարի ՚ի դատաստան՝ նա մայր է
ա̃մ մեղաց և չարեաց · յիմարեալ է և
ո՛չ գիտէ զինչ առնէ ։

Որդեակ՝ զչարախօսութի̃ ղուժեքէ մի՛
ասեր և մի՛ լսեր · զի կարի խոցէ զսիրտ
մարդոյն · և ապականէ զփառք մար-
դոյն , զի մեծ նախատինք է ։

Որդեակ՝ Թէ կամիս մարդոյ զինչս տալ՝


յա

յառաջ մի՛ պարծենար և մի՛ խոստանար.
և թէ պարծենաս և չտաս հետ բարեկա_
մին թշնամի լինիս ։

Որդեակ՝ ամբարտաւան մարդն հեռի է
և օտար յընտանեաց և՚ի բարեկամաց իւ_
րոց. և թէ բազումանգամ ջանայ սիրով՝
նա առնու անարգանս անձին իւրոյ. և
հեռանայ յընկերացն ։

Որդեակ՝ լաւ է ստանալ ձի սըմնակել և
էշ լուտ վարուք, քան թէ ծառայ փախ_
չօղ և սըտասաց ։

Որդեակ՝ մի՛ երաշխաւոր լինիր բարեկա
մին քո. զի բազում վէշտ կրես մինչև
վճարես զպարտս նր.

Որդեկ՝ մարդ չարախորհուրդ և նախան
ձոտ, ոչ թէ միայն ատելեացն առնէ դըժ_
րութի. այլ բնութ̃ անձեանց հակառակ կայ։

Որդեակ՝ լերինք շտեմարանք ստուաց են.
և նենգաւորք՝ բնակարան չարեաց են։

Որդեակ՝ մի՛ այլոց կանանց կատարեր ըղ
ցանկութի քո. զի օտար կինն նման է աղբ
ջրի. որ որքան խմես՝ առաւելագոյն ծա_
րաւիս. և զանուն վատ ժառանգես ։

Որդեակ՝ զի որ իմաստունն է՝ նման է ոչ
հուր ՚ի լոյս և՚ի տապոյ բորբոքի. և ոչ
արեգակն ՚ի ճառագայթից երևի և լու_
սա

սաւորէ զարարածս. և կամ ոչ յառնուծն
որ ուժեղութե̃ն գովի. և ոչ բաղայն 'ի
սրընթաց առ 'ի շաչելոյ թևոցն գովի, և ա
ռաւել մեծարի 'ի յաչս թագաւորաց
և մեծամեծաց ։

Որդեակ՝ առն խողամտի ոչ գոյ սիրելի
երբէք. զի ասէ 'ի սրտի իւրում թէ՝ կե՛նքս
ոչ անցանի, և ընդվակս ոչ պակասի. և ոչ
գիտէ թէ ա̃ծ տայ այնպիսեաց մահ. և
զինս ն̃ր այլոց տայ. և չունենայ անուն
բարի՝ որ յիշեն զնա ։

Որդեակ՝ այր անմիտ յորժամ արբենայ,
յօժարի 'ի կռիւ. և կարծէ 'ի միտս իւր
թէ, չկայ մեծագոյն քան զնա. և ոչ գի-
տէ, թէ յորժամ հանդիպի առ ոմն քաջ՝
սպանանէ զնքն ։

Որդեակ՝ ոչ հողն մայր է ա̃մ ընկոց.
Նոյնպէս և արբեցութի̃ն մայր է ամե-
նայն չարեաց ։

Որդեակ՝ թէ լինիս ես ո̃ի և մարդ-
կան՝ պահեա զանձն քո 'ի զեղխութէ. վ̃ն զի
'ի քեզ են հոգք երկրաւորաց ա̃մ ։

Որդեակ՝ տեսի զգաղան կատաղեալ՝ որ
արձակեցաւ 'ի վ̃ր իմ՝ և ոչ վախեցայ 'ի նը
մանէ. հանդիպեցայ թշնամւոյ իմոյ՝ և ոչ
յաղթեցայ զնա. հանդիպեցայ կնոջ լեզ-



ուանի

ուսանուց՝ և յաղթեցայ 'ի նմանէ ։

Որդեակ՝ մի լինիր փոյթ իբրև զնշենի՝ որ յառաջ ծաղկի և ապա ուտի, այլ լեր ծաղանդ՝ և պտղաբերեա զհետոյն։

Որդեակ՝ անկանի անօրէնն վասն չար գործոց իւրոց, և կանգնի արդարն վասն բարի գործոց իւրոց։

Որդեակ իմ Նաթան՝ զայս ամ զոր ուսուցի քեզ՝ 'ի միտ առ և կատարեա զամ. և լինիս իմաստուն 'ի մէջ ընկերաց քոց. և 'ի յաչս թագաւորաց երևելի լինիս։

Այս է խրատն՝ զոր ուսուցի որդւոյն իմոյ Նաթանայ. և ես խիկարս գիտէի թէ՝ զամ խրատս իմ պահէր 'ի սրտի իւրում. այլ նա որպէս զփոշի ընդուս 'ի վր ելման գետոյ և կորնչի՝ այնպէս արար ըզ խրատս իմ։ Յառաջ տուի զտունս իմ նր, և զծառայքս իմ։ զինչս և զապարանս և զիշխանութիս իմ։ և արարի ատենադպիր սենեքերիմ արքային իմոյ։ Իսկ նա մոռացաւ վաղվաղակի զխրատս իմ. և սկսաւ չարիս գործել և առնել անիրաւութիս. զծառայքս իմ ոչ խնայէր, և զինչս իմ վատնէր. և զբազում խրատս իմ անտես արար։

Իսկ ես խիկարս յորժամ տեսի զչարութի



Նա

Նաթանայ՝ գնացի առ թագաւորն իմ Սե_
նեքերիմ, և պատմեցի նմա մի ըստ միոջէ
զչարութի Նաթանայ. և խնդրեցի թուղթ
'ի թագաւորէն, զի մի իշխեսցէ Նաթան
մերձենալ ընչից իմոց: Եւ հրամայեաց
թագաւորն՝ որ բերին զՆաթան. և ե_
տուր պատուէր նմա ոչ մերձենալ ըն_
չից իմոց. Եւ ես խիկարս ելեալ գնացի
'ի տունս իմ:

Եւ Նաթան սկսաւ միօք չարիս գործել
վ͞ն ինձ 'ի դուռն թագաւորին. և խոր_
հեալ շինեաց մօհր մի՝ ըստ նմանութե͞ իմ
մօհրին. քանզի յառաջագոյն գիտէր զկերպ
մօհրին իմոյ. և փորեաց զիմ անունս, և
կոխեաց 'ի թղթի միոյ. և գրեալ յիմ բե_
րանէ առ փարաւոն արքայն եգիպտա_
ցւոց. որ չարկամ էր ընդ հետ իմ թա_
գաւորին սենեքերիմայ:

Եւ էր գրեալ այսպէս:

Խիկար իմաստնասիրէ ողջոյն ընդ քեզ՝
փառաւոր արքայ. յորժամ գիրս առ
քեզ հասանի՝ փութով ժողովէ զզօրքդ,
և եկ 'ի դաշտն արծբունեաց, որ 'ի հրօտից
ամսոյն ի͞ է͞ լինի. և առցես զսենեքերիմ
թագաւորն առանց պատերազմի: Եւ յոր_
ժամ գրեաց Նաթան այսպէս՝ խորհեցաւ



և

և գրեաց թուղթ մի այլ նման սորա՝ իմ
թագաւորին բերնէն առ իս։

Եւ էր գրեալ այսպէս։

Սենեքերիմ արքայէ ողջոյն ընդ քեզ սիրելի և իմաստուն իմ խիկար. յորժամ գիրս առ քեզ հասանի՝ փութով ժողովէ զզօրքդ բազում և եկ 'ի դաշտն արծրունեաց, որ 'ի հրոտից ամսոյն ի̃ է̃ լինի. զի պատերազմեսցեն ընդ հետ զօրօք փարաւոնի. քանզի դեսպանք փարաւոնի եկեալ են առ իս։ Եւ յորժամ գրեաց այսպէս՝ գաղտնաբար տարեալ ետուր հաւատարիմ մարդոյ, որ բերեալ հասուսցէ 'ի ձեռս իմ խիկարայ։ Եւ ես խիկարս յորժամ առի զթուղթն՝ բացի և կարդացի՝ զոր գրեալն էր. և վաղվաղակի ժողովեցի զօրք. և կատարեցի զհրամայեալն 'ի թագաւորէն անմեղութ̃ և ոչ գիտացի զչարու̃ նաթանայ՝ որ առ իս։ Եւ զմիւս թուղթն՝ զոր գրեալ էր իմ բերանէն առ փարաւոն արքայն, զայն կնքեալ և տարեալ ձգեաց գաղտնաբար 'ի դուռն դարպասի թագաւորին։ Եւ գտեալ մի ոմն 'ի ծառայից ըզ թուղթն՝ տարեալ ետուր 'ի ձեռն սենեքերիմ արքային իմոյ։ Եւ իբրև բացեալ կարդացին զթուղթն առաջի թագաւորին՝



զա

զահիհարեալ լի՛ եղև տրտմութե՟, և ոչ
գիտէր, զինչ առնէր Խիկարիս։

Յայնժամ Նաթան՝ որ դպիր էր Թագա-
ւորին՝ եմուտ առ Թագաւորն և երկրպա-
գեաց և ասէ. Ո՛վ Տէր արքայ և տէր իմ.
զի հայր իմ Խիկար ոչ գիտաց զերախտիքս
քո, և կամի խափանել զԹագաւորութի՟ քո.
և եթէ ոչ հաւատաս բանիս՝ կացցուք մին-
չև որ կատարի Թիւն 'ի հրոտից ի է. և
ելցուք և գնասցուք 'ի դաշտն արծրու-
նեաց. և տեսցուք աչօք մերովք զերախ-
տամոռացութի՟ Խիկարայ՝ որ առ քեզ։

Յայնժամ սենեքերիմ Թագաւորն երկ-
մտեալ կայր տրտմութե՟՝ մինչև եղև
'ի հրոտից ամսոյն ի է։ Իսկ ես Խիկարս
առարի զզօրս իմ. և եկեալ բնակեցայ 'ի
դաշտն արծրունեաց։ Իսկ եկեալ Թագա-
ւորն սենեքերիմ գայր 'ի դաշտն արծրու-
նեաց փորձել զիս։ Իսկ ես Խիկարս յոր-
ժամ տեսի զզօրքն սենեքերիմայ՝ խաղմ
առարե՟լ խաղացի և մէջ դաշտին, դէմ յան-
դիման զօրօք նո՟ պատերազմիլ. քանզի
կարծէի, թէ զօրք փարաւոնի է։

Յայնժամ տեսեալ սենեքերիմայ զզօրքն
իմ, փախստական եղև. և ես գնացի
զօրօք փոքր ինչ յետև նո՟՝ և ոչ գտի.


դար

դարձայ և եկի 'ի յօթևանս իմ. և ուրա_
խացեալ մտօք իմովք՝ թէ փախուցի զփա
րաւոն զօրօք իւրովք: Եւ յորժամ գնաց
սենեքերիմ փախստական 'ի դարպասն իւր
խելագարեալ լի' տրտմութե՟, և ոչ գիտէր
զինչ գործէր խիկարին՝ որ ըմբռնէր.

Յայնժամ եմուտ Նաթան առ Թագա_
ւորն՝ ողջունեաց և ասէ. ահա տեսար
աչօք զերախտամոռացութի՟ խիկարայ.
այժմ մի' տրտմիր, զի ես ածեմ զհայրն
իմ խիկար առաջի քո: Եւ ասէ սենեքե_
րիմ ցնաթան, թէ դու բերես զխիկար,
և տաս 'ի ձեռս իմ, զոր ինչ խնդրեսցես՝
տաց քեզ: Եւ երկրպագեալ Նաթան՝ ել
արտաքս և գնաց. Եւ գրեաց թուղթ մի
'ի թագաւորին բերնէն. և ետուր ցհա_
ւատարիմ մարդ մի ասելով թէ՝ տարեալ
տացես զայս 'ի ձեռն խիկարայ, զոր էր
գրեալ այսպէս.

Սենեքերիմ արքայէ ողջոյն ընդ քեզ սի_
րելի և իմաստուն իմ խիկար. քանզի
յոյժ հաճոյ թուեցաւ թագաւորիս սե_
նեքերիմայ զերախտիքն քո. և զի փա_
խեան զօրք փարաւոնի յերեսաց քոց.
այժմ տուր հրաման զօրաց քոց գնալ
խաղաղութե՟ 'ի տունս իւրեանց. և դու ել

և է՛կ, զի ուրախ եղէց ընդ քեզ։

Եւ ես խնկարս յորժամ կարդացի՝ ուրախ եղէ յոյժ. և տուի հրաման զօրաց իմոց գնալ ՚ի յօթևանս իւրեանց, Եւ ես ելեալ գնացի տեսանել, և ուրախ լինել ընդ Թագաւորին իմոյ։ Եւ յորժամ հասի մտանուլ ՚ի դուռն Թագաւորին. տեսեալ զիս զինուորացն՝ ըմբռնեալ տարան ածին առաջի Թագաւորին։

Եւ յորժամ ետես Թագաւորն զիս՝ լի՛ եղև տրտմութեամբ. և հրամայեաց որ ետուն զայն Թուղթն ՚ի ձեռս իմ։ Եւ ես երբ բացեալ կարդացի՝ նա յայնժամ կապեցաւ լեզուս, և գնաց իմաստութիւնս, և ոչ գիտէի, զի՛նչ պատասխանեմ Սենեքերիմայ։ Նա ողոքանօք ասացի՝ ա՛րքայ և տէր իմ, մի՛ ՚ի զուր դատեր զիս, զի չունիմ խապար ՚ի յայս բանէս, այլ՝ անպարտ եմ։ Եւ ոչ եդ ունկն աղաչանաց իմոց. այլ հրամայեաց սպանանել զիս։

Յայնժամ Նաթան քեռ որդին իմ կապեաց զձեռս ՚ի յետս փոխանակ բարի խր-րատոյն իմոյ՝ զոր յառաջն տուի. Թէ որդեակ՝ զարձակեալն մի՛ կապեսցես. Նա յառաջ զիս կապեաց. Եւ ես դարձեալ աղաչեցի Թագաւորին իմոյ թէ՝ տո՛ւր զիս ՚ի

'ի ձեռն աբուսմարայ զօրապետին . և նա տարեալ զիս 'ի տունս իմ՝ և'ի վր̅ շէմանց իմոց կատարէ զհրամանս քո, և զիս գլխատէ . և զգլուխն իմ ա̅ կանգուն հեռի ի թաղէ 'ի մարմնոյս : Եւ հրամայեաց թագաւորն աբուսմարայ կատարել այսպէս՝ զոր խնդրեցի : Եւ կալեալ զիս աբուսմարայ տանել 'ի յսպանումն . և ես խիկարս ղրկեցի գաղտնաբար խապար առ աբեստան կնոջն իմ, թէ պատրաստէ՛ ռ̅ աղջիկս, և արա կերակուրս ազգի ազգի . և յորժամ եկեսցեն 'ի յըսպանումն իմ, արա ընթրիս, և բեր զայն ռ̅ կոյս աղջկունս, որ լացցեն զմահն իմ . և կնոջն իմ վաղվաղակի կատարեաց զհրամանս իմ : Եւ յորժամ գնացաք հասաք 'ի տունս իմ, խընդրեցի աղաչանօք յաբուսմարայ զօրապետէն և ասացի : Տուր ինձ զհրամանս, որ տանուցում ընթրիս առ սիրելիս և առ բարեկամսն իմ փոքր ինչ . քանզի այլ ոչ մնամ կենդանի : Եւ ասաց աբուսմար՝ արա որպէս և կամիս . և արարի ընթրիս մեծ սիրելեաց իմոց, որք եկեալ էին 'ի սպանումն իմ . և բերի կերակուրս զանազան, և ըզ գինիս անապակս, նաև զհազար աղջկունսն՝ որք լացցեն առաջի նոցա զմահն իմ :

Եւ

Եւ նոքա 'ի սաստիկ տրտմութենէն և ար-
բեալ 'ի գինւոյն՝ արբեցան ամենեքեան,
և անկեալ քնեցան։ Եւ ես խիկարս կայի
կապեալ երկաթեօք․ և գնացեալ զար-
թուցի զաբուսմաք զօրապետն, և ող-
գանօք ասացի նմա։ Գիտե՞ս եղբայր՝ զի
այն ժամանակն որ երբ բարկացաւ Թա-
գաւորն 'ի վ͞ր քո, և ետ 'ի ձեռս իմ, թէ
տա՛ր սպան զաբուսմաք, և ես առէլ տա-
րայ զքեզ, և ո՛չ սպանի, այլ՝ պահեցի
զաղտ․ և եկեալ ասացի թագաւորին թէ՝
սպանի զաբուսմաքն։ Եւ յորժամ անցաւ
փոքր ժամանակ 'ի վ͞ր, գնաց բարկութի
թագաւորին, և փոշիման եղև սպանանելն
զքեզ։ Եւ ասաց՝ աւա՛ղ քեզ ա՛բուսմաք,
զի դու կենդանի պիտէիր։ Եւ ես երբ
լո՛ւայ զայս 'ի թագաւորէն՝ եկեալ հանի
զքեզ, և տարայ առաջի թագաւորին, և
բազում պարգևս առի․ Այժմ աղաչեմ
զքեզ, արասցես փոխարէն առիս․ և կայ
'ի ներքև շէմանց իմոց հոր մի մեծ․ ձգեա՛
զիս 'ի հորն գաղտնաբար․ և ես ունիմ ծա-
ռայ մի մահապարտ․ քանզի է մարդաս-
պան․ և ահա կապեալ կայ 'ի բանտն․ և
ունի զնմանութիս իմ․ հագո՛ նմա զհան-
դերձս իմ, և զպարթն զժողովուրդ իմ։

և

և շուտով կարեմ զգլուխն. և տար թաղէ զգլուխն Զ կանգուն հեռի ՚ի մարմնոյն. Եւ եղև ունկնդիր աղուսմաք խնդրուածոց խիկարիս, և արար այնպէս. և գնաց առ Թագաւորն թէ՝ սպանեցի զխիկար. և յոյժ ուրախացաւ Թագաւորն ՚ի սպանումն իմ.

Եւ ապա գնաց Նաթան խնդրել ՚ի Թագաւորէն հովուելոյ զստացուածս իմ. և Թագաւորն հրամայեաց տալ Նաթանայ զամենայն իմ. Եւ գայր Նաթան ՚ի տունն իմ հանապազ. ուտէր և ըմպէր և աղտեղէր զծառայս իմ և զաղախնեայս իմ. և կամէր չարիս գործել ընդ հետ կնոջ իմոյ. և կինն իմ ոչ հնազանդէր կամաց նորա. Եւ ես զամենայն լսէի ականջօք իմովք. ըղձայնն գուսանաց. և զպարգշտելն ընդ կնոջ իմոյ. և խնդրէի օր նմա, և ոչ գըտանէի. Եւ յորժամ անցաւ ժամանակ մի՝ լուեց փարաւոն արքայն եգիպտացւոց, եթէ սենեքերիմ արքայն սպանեց զխիկար, յոյժ ուրախացաւ. Եւ առաքեաց փարաւոն գիր առ սենեքերիմ.

Եւ էր գրեալ այսպէս.

Փարաւոն արքայէ ողջունիւ ծանիր սենեքերիմ Թագաւոր. քանզի կամիմ

շինել դարպաս մի 'ի յօդս երկնից անսիւն
և անգերան · զրկէ՛ ինձ ճարտար մէյմար
մի , որ եկեալ շուտով կատարէ զհրամանս
իմ: և թէ ոչ զրկես՝ գամ բազում հեծե_
լօք , և աւեր ածեմ զերկիրդ · և առնում
'ի քէն հարկ: Նոյն ժամ բերեալ ետուն
զթուղթն 'ի ձեռն սենեքերիմայ՝ բացեալ
կարդաց զնա · և իսկոյն զարհուրեցաւ
բոլոր անձն նր̃ 'ի բանից փարաւօնի ։
Նոյն կոչեալ զմեծամեծս և զիմաստունս
և զդպիրս և ասէ՝ քանզի սպանեցաք զխի
կար , այլ ով կարէ տալ պատասխանի փա_
րաւօնի ։ Նոյն ասացին մեծամեծքն՝ արքայ
յաւիտեան կաց · քանզի ահա կայ յոր_
դեգիր Խիկարայ Նաթան՝ որ առաւել
հանճարեղ և իմաստուն է քան զԽիկար ,
և նա կարէ տալ պատասխանի գրոյս ։
Նոյն հրամայեաց թագաւորն կոչել զՆա_
թան · և իբրև եկն՝ ետուն զթուղթն 'ի
ձեռն և կարդաց ։ Ասէ թագաւորն՝ կա_
րօ՞ղ ես տալ պատասխանի փարաւօնի · և
ասէ Նաթան՝ այս անհնարին է 'ի մարդ_
կանէ ։ Յայնժամ տարակուսեալ սենեքե_
րիմ կոծէր զանձն իւր ասելով՝ աւա՜ղ
քեզ Խիկար իմաստուն իմ, զի սպանեցաք
զքեզ · այժմ ոչ կարեմք տալ պ̃սխանի ,

և կրեմք վիշտ բազում 'ի նմանէ ։ Եւ եթէ որ բերէ զքեզ կենդանի առաջի իմ, խիկար՝ տաց նմա կշռանօք քո ոսկի ։

Եւ լուեալ աբուսմաք՝ երկիրպագ Թագաւորին և ասէ՝ ողջ լեր արքայ իմ . զի թէպէտ կոծաս 'ի վ̅ր սպանման խիկարայ՝ այլ եթէ որ բերէ զխիկար կենդանի առաջի քո՝ փոխանակ նր̅ սպանանե՞ս զնա ։ Եւ ասէ Թագաւորին՝ ոչ սպանանեմ զնա, այլ՝ տամ պարգևս ազնիւ նմա ։ Եւ երկրպագեալ աբուսմաք Թագաւորին՝ եկեալ վաղվաղակի եհան զնա 'ի հորէն . և տարեալ կացոյց առաջի սենեքերիմայ ։ Եւ յորժամ ետես Թագաւորն զնա կենդանի՝ յարեաւ յաթոռոյն, և անկաւ ըզ պարանոցաւս իմով, և համբուրեաց զնա և ասաց . ով խիկար՝ մեռեալ էիր և կենդանացար ։ Եւ յոյժ ուրախ եղև Թագաւորն . և ետուր պարգևս մեծամեծս աբուսմաքայ զօրապետին . և հրամայեաց պատուել զնա աւուրս խ̅ . և յետ լրման խ̅ աւուրց՝ հրամայեաց Թագաւորն բերել զնա առաջի իւրն . և ետուր կարդալ ինձ զԹուղթն փարաւօնի ։ Եւ յորժամ կարդացի ես խիկարս՝ ասացի առ Թագաւորն՝ մի տրտմիր և մի կծար, զի ես եր-



Թամ

թամ և տամ պատասխանիս փարաւոնի,
և առնում հարկս ՚ի նմանէ և գամ։ Եւ
իբրև լուաւ թագաւորն իմ, յոյժ ու-
րախ եղև ՚ի բանից իմոց։

Եւ ապա ես Խիկարս՝ առաքեցի պատ-
ուէր առ աբեստան կինն իմ, թէ բռնէ
է ձագս արծուոյ. և մանել տուր պարան
մի երկայն. և բերել տուր է ծծկեր տղ-
այ. և է կին որ պահէն զտղայքն։ Եւ
ուսո՛ տղայոցն կանչել՝ կաւ ծեփ աղիւս
բերէք. և ամէն օր կապէ զերկու տղայքն
՚ի վր՟ արծուոյ ձագինն, և թռո՛ ՚ի յօդն պա-
րանաւն, և իջօ՛ ՚ի վայր, մինչև կատարեալ
ուսանին զելանելն և զիջանելն և զբար-
բառելն։ Եւ կինն իմ՝ իմաստուն էր, և
փութով կատարեաց զհրամայեալն իմ։
Եւ ես առի հրաման՚ի թագաւորէն իմոյ.
և ելեալ գնացի ՚ի տունս իմ։ Եւ առի
զերկու տղայքն և զձագ արծուիներոյն՝
և եդի ՚ի սնտուկ մի, և ելեալ գնացի առ
փարաւոն արքայն։ Եւ յորժամ հասայ
յեգիպտոս՝ իջևանեցայ՚ի տուն մի, և թո-
ղի անդ զսնտուկն ՚ի տանն, յոր իջևա-
նեալ էի. և ես գնացի առաջի փարաւոնի
և երկրպագի նմա։ Եւ ասէ ցիս փարա-
ւոն. ի՞նչ մարդ ես դու. կամ ուստի՞
գաս։ Եւ

Եւ ես ասացի. ա՛րքայ յաւիտեան կաց. ահա ծառայ քո է, որ առաքեաց սենեքերիմ արքայն կատարել զհրամանս քո. և բերեալ եմ ընդ իմ ճարտար մէյմար, որ շինէ դարպաս 'ի յօդս. Եւ ասաց փարաւոն. զի՞նչ է անուն քո. Եւ ես ասեմ, աբակայ է իմ անունն. Եւ հարցեալ ցիս փարաւոն թէ՝ զի՞նչ պէտք է մէյմարացդ 'ի պէտս դարպասին. Եւ ես ասացի ցնա՝ բերել տուր կաւ ծեփ աղիւս. Եւ հրամայեաց թ̃ւորն՝ որ բերին վաղվաղակի. Եւ ես խիկարս գնացի կապեցի զերկու տղայքն 'ի յերկու արծուէոյ ձագին. և թուուցի դէպ 'ի յօդս. Եւ տղայքն աղաղակէին կանչելով, կաւ ծեփ աղիւս բերէք, որ շինեմք զդարպասն. Եւ ո՛չ ոք կարէր հանել ինչ 'ի վեր. Եւ ես ասեմ, հանեցէք, զի մի՛ դատարկ մնան. Եւ տեսեալ զայս զօրքն փարաւոնի՝ փախեան և անկան 'ի դարպասն. և պատմեցին փարաւոնի զսքանչելիսն ա̃մ. Եւ ելեալ փարաւոն 'ի տես և աղաղակ տղայոցն 'ի յօդն. և զարմացաւ յոյժ, և ասաց 'ի մտի իւրում թէ՝ սա՛ շատ իմաստու̃թ լաւ է քան զխիկար. և ո՛չ գիտէր թէ՝ ես եմ խիկարն. Եւ մտայ առ թագաւորն, և երկրպագի նմա.



Եւ

Եւ ասէ ցիս փարաւոն · երդմնեցուցա_
նեմ զքեզ, զի ասես ինձ զստոյգն · ով ես
դու ։ Եւ ասացի ցնա , ես եմ խիկարն ։
Եւ ասէ փարաւոն՝ ով Թշուառական ,
կենդանացա՞ր ։ Եւ դարձեալ ասէ · ով
իմաստուն խիկար մեկնեա ինձ զայս Թէ՝
զինչ է սիւնն այն 'ի վր սնի · մայրք երկո_
տասան 'ի վր մայրեաց · անուանք Լ 'ի վր ա_
նուանեց · սուրհանդակք Բ՝ մինն սև և
միւսն սպիտակ ։

Պատասխանեցի և ասացի · սիւնն՝ տա_
րին է · մայրք երկոտասան՝ ամիսք տար_
ւոյն է · անուանք Լ՝ աւուրք ամսոյն է ·
սուրհանդակք Բ՝ տիւն և գիշերն է ։
Եւ դարձեալ ասէ փարաւոն · ով խիկար
մանէ ինձ պարան աւազէ ։ Եւ ես գնացի
ծակի յորմն պատի միոյ դէմ յարևելս ·
և 'ի ծագել արևուն, անկաւ շողն 'ի ներս ·
և ես առի աւազ և փոշի Բ ափս , և տայի
դէմ արեգականն, որ տանէր ոլոր ոլոր ծա_
կէն 'ի ներս · և ես կանչէի՝ կծեցէք զպա_
րան շուտով ։ Եւ զահի հարեալ փարաւոն
ապուշ մնաց · և կոչեաց զիս առ ինքն՝ ե_
տուր ինձ պարգևս ազնիւս և հարկս Թա
գաւորին իմոյ , և շնորհաւոր եղև 'ի նոր
մանէ ։ Եւ ես խիկարս ելեալ եկի առ սե_
նէ

նեքերիմ թագաւորն իմ, և անկեալ համ-
բուրեցի զոտս նր. և պատմեցի մի ըստ
միոջէ զպատասխանիսն փարաւոնի. այլև
զառաջի գրոյն զանմեղութին իմ։ Եւ յոր-
ժամ լուաւ զայս ամ, յայնժամ յոյժ
ուրախ եղև սենեքերիմ ասելով. խնկար
իմաստուն իմ, այժմ ցնծութբ ուրախ եմ
'ի կենդանութին քո. և զոր ինչ խնդրես
յինէն՝ տաց քեզ.

Եւ ես խնկարս շնորհակալ եղէ յար-
քայէս իմմէ և ասացի. ոչ է պիտոյ ինձ
գանձս կամ պատիւս՝ բայց միայն զայս
ինչ խնդրեմ 'ի քէն. զի զնաթան քեռ-
որդին իմ՝ որ է որդեգիր ինձ և աշա-
կերտ՝ հրամանաւ քո տացես ինձ. զի ու-
սումն այլ կայ պակաս, զայն ևս ուսու-
ցանեմ՝ որ լինի կատարեալ. Եւ հրա-
մայեաց թագաւորն տալ զնաթան 'ի ձեռս
իմ. և ասէ, զոր ինչ կամիս՝ արա՛ դմա.
Եւ ես կալայ զնաթան, և տարայ 'ի տունս
իմ, և սկսայ ասել ցնա այսպէս. Որդեակ
իմ նաթան՝ զառաջին խրատն՝ զոր տուի
քաղցրութբ՝ ոչ պահեցեր 'ի սրտի քում
և կորուսեր, արդ՝ այժմ ուսուցանեմ
դառնութբ. Եւ կապեցի զնա երկաթի
կապանօք, և եդի 'ի պարանոց նր ե Ճ լիտր



եր

երկաթ, և յանձնեցի զնա բելիար ծա_
ռային իմոյ․ և հրամայեցի առնուլ թուղթ
և թանաք'ի ձեռին իւրում, զի 'ի մտանելն
և յելանելն իմ՝ զոր ինչ առնիցեմ Նաթա_
նայ՝ գրեսցէ։ Եւ ետու պատուէր նմա,
զի զհաց և զջուր չափով տացէ․ այնքան՝
որ ոչ մեռանի և ոչ զօրանայ ։

Եւ նախ և յառաջ զարկի բիր 'ի թի_
կունս նորա և ասացի ։

Որդեակ իմ Նաթան՝ մարդոյ ականջքն
եթէ ոչ լսէ, զթիկունսն ծեծելով լսե_
ցուցանեն ։

Որդեակ իմ Նաթան՝ յաթոռ փառաց
նստուցի զքեզ․ այլ դու յաթոռոյ իմոյ
ընկեցեր զիս և կործանեցեր ։

Խօսեցաւ ընդ իս Նաթան և ասէ․ զի
ա՞րդ ուրացար զքեզ որդին քո ։

Եւ ես ասացի․ ո՞րպ ոչ ուրացայց ։

Որդեակ՝ զի եղեր ինձ ոպ̅ կարիճն այն՝
որ եհար զասեղն, որ ասեղն ծայրն չար
էր քան զիւրն․ և դարձեալ՝ իբրև զայն՝ որ
եհար զոտից ըղտուն․ և նա հարեալ զթա_
թըն 'ի վ̅ր կարճին՝ սատակեաց զնա ։

Որդեակ՝ զի եղեր ինձ ոպ̅ վայրենացեալ
եզն․ որ էարկ զտոճն, և անկաւ վարոցն,
և վիրաւորեցաւ իւր ոտքն ։



Ո՛ր

Ո՛րդեակ՝ զի եղեր ինձ որպ͞ այծն այն՝ որ
ուտէր զտորոնն. և ասէր՝ ես՚ի կենդանու͞է
իմում ուտեմ զքեզ. Թո՛ղ յետոյ հանեն
զքո քօքն, և ներկեն զմորթին իմ։

Ո՛րդեակ՝ զի եղեր ինձ որպ͞ այրն այն՝ որ
ձգեաց նետ դէպ՚ի յերկինս. թէպէտ ո՛չ
կարաց հասուցանել, այլ՝ զանօրէնութի
շահեցաւ, և դարձաւ նետն ՚ի գլուխ
իւր. նոյնպ͞ս և դու կամեցար սպանանել
զիս, այլ անմեղութիս իմ ապրեցոյց զիս։

Ո՛րդեակ՝ զի թէ ագի խոզին ութն կան
գուն երկայն լինի՝ ՚ի տեղի ձիուն ոչ
կարէ լինիլ։

Ո՛րդեակ՝ զի եղեր ինձ ո͞պ արջն այն՝ որ
հանդիպեցաւ իշոյ միոյ, և ասաց ողջոյն ը͞
քեզ. և ասէ էշն՝ այդ ողջոյնդ՝ իմ տիրոջս
պարանոցն լինի՝ որ արձակեաց զիս ՚ի մսու-
րէն, որ եկի և հանդիպեցայ քեզ, և տե-
սի զքո դէշ երեսդ չար։

Ո՛րդեակ՝ զի եղեր ինձ որպ͞ որոգայթն
այն՝ որ թաղեալ կայր ՚ի յաղբն. և եկեալ
ճռնճղուկ մի ասէ. զի՞նչ կայցես աստ. ա-
սէ ակնատն՝ աղօթս առնեմ առ ա͞ծ. ասէ
ճռնճղուկն՝ զի՞նչ է այդ ՚ի բերանդ. ասէ
ակնատն՝ քաղցելոց հաց. և վաղեաց ճռնճ
ղուկն առնուլ զհացն ՚ի յակնատէն. և



ակ

ակնատն անկաւ 'ի վիզն ձընձղկին. և ասէ
ձընձղուկն՝ թէ ա՛յդ է քաղցելոց հացն.
ապա և ած այսպէս լսէ աղօթից քոց։

Մ՛րդեակ՝ զի եղեր ինձ որպ շունն այն՝ որ
դողայր 'ի ցըրտոյն, և մտաւ 'ի հնոց բըրտին.
և յորժամ տապացաւ՝ սկսաւ հաջել ընդ
երես բըրտին։

Մ՛րդեակ՝ զի եղեր ինձ որպ շունն այն ա_
գահ, որ ունէր հաց մի 'ի բերանն, և եր_
թայր յեզեր գետոյն. և տեսեալ շուք մի
այլ 'ի մէջ ջըրին՝ և հաց մի 'ի բերան նո՝
ձգեաց զիւր հացն 'ի բերանէն, և անկաւ 'ի
ջուրն, զի առցէ զայնու հացն. և իբրև
հասաւ 'ի մէջ գետոյն, ո՛չ զշունն եգիտ
և ո՛չ զհացն. այլ խեղդեցաւ շունն՝ և
զրկեցաւ յիւր հացէն. նոյնպէս և դու
զհացն իմ խլել կամեցար՝ և զրկեցար 'ի
քո հացէն։

Եւ դարձեալ Նաթան աղաչանօք ասէ ա_
ուխ՝ մեղայ քեզ հա՛յր՝ այլ չգործեմ,
զոր ինչ գործեցի. մի՛ չարաչար տանջեր
զիս։ Եւ ես ասացի՝ ահա տամ քեզ օ_
րինակ մի. զի որպ ծառն այն՝ որ բուսեալ
էր յեզր գետի միոյ. և մարդ մի ծառայէր
նմա. և յորժամ հասանէր պտուղն՝ թա_
փէր 'ի գետն և կորնչէր և երբ գայր
տէրն՝

տէրն՝ ոչ գտանէր զպտուղն. և աշխատե_
ցաւ այրն այն ՟Բ և ՟Գ տարի. այլ 'ի հաստա_
նել պտղոյն թափէր 'ի ջուրն, և ոչ շահէր
'ի նմանէ. և ապա կտրեաց զծառն, և ձը
գեաց 'ի ջուրն ասելով. այսքան աշխատե_
ցայ, զի՞նչ շահեցայ, որ այսուհետև գը
տանեմ։ Նոյնպէս և դու եղեր ինձ. զի
յառաջագոյն այսչափ խրատս տուի քեզ՝
և ոչ լսեցիր. այժմ զի՞նչ պիտի լինիս.
արժանի ես յաւդ չարչարանացդ՝ մինչև
մեռանիս։ Նաև սպանի զնա, և բարձաւ չարն
'ի միջոյ, և եղև խաղաղութի։ Արդ՝ զի՞նչ
մարդ՝ որ բարւոյն չար հատուցանէ, իբ_
րև զնաթան կորնչելոց է։ Յորմէ փրկես_
ցէ զմեզ ՔՍ ԱԾ մեր. և նմա''.

## Պատմութիւն Աղջկան և Մանկան.
Եւ հարցմունք նոցա ընդ միմեանս։

ԱՅՐ ՄԻ ԷՐ ՄԵԾԱ_
տուն և իշխան 'ի քաղաքի մի.
և ունէր անչափ գանձ։ Ոսկի
և մարգարիտ անգին. և պատ
ուական ակունք, որ չկայր յայն աշխարհին



քան

քան զնա մեծատունն։ Եւ ինքն ծերացեալ
էր՝ և զաւակ ոչ ունէր. և հանապազ ա-
ղաչէր զած վն զաւակի։ Եւ ած ետ նը-
մա որդի անձնման և գեղեցիկ։ Երբ մե-
ծացաւ տղայն՝ ետ զնա հայրն յուսումն
իմաստասիրութե. Եւ նա ուսաւ զամի-
մաստասիրական բանս. և էր պատերազ-
մօղ անյաղթ։ Բայց յետոյ ուտել և խմել
անկաւ. և հատոյց՝ զգանձ հօրն և մօրն.
և հայրն ու մայրն մնացին դատարկ, որ
այլ ինկի ընաւ իրք չմնաց։ Ասաց որդին
ընդ հօրն և մօրն. կամիք, որ հեռանամք
յայս երկրէս, և երթամք հանց երկիր՝ որ
չճանաչեն զմեզ. և զհպարտութիւն յետ դը-
նեմք, ու մուրամք և ապրիմք. ոչ մեք
տրտմիմք, և ոչ մեր չար կամն ուրախանայ
'ի վր մեր։ Ասացին ծնողքն, դու գիտես
որդեակ. Առ մանուկն զհայրն և ըզ-
մայրն, և գնաց 'ի հռոմ քաղաք։ Եւ կայր
'ի քաղաքին յայնմիկ թագաւոր մի բարի
և իմաստուն. մտան 'ի քաղաքն՝ և իջան 'ի
տուն մի։ Եւ այն թագաւորն յորս էր ե-
լեր. և երբ եկաւ թագաւորն 'ի յորսուն՝
նա մտաւ մանուկն առ թագաւորն, եդ
ծունր և կանգնեցաւ։ Եւ սկսաւ թա-
գաւորն խօսիլ ընդ մանկանն և ասաց.



զի՞նչ

զի՞նչ խնդրես յինէն, որ պարգևեմ քեզ։ Ասէ մանուկն. Թագաւոր՝ յաւիտեան կաց. ես Է ծառայ ունիմ ծախու այր և կին. խնդրեմ, զի գնես զնոսա։ Ասէ Թագաւորն. բեր, և ես գնեմ։ Գնաց մանուկն առ հայրն և մայրն. և ասաց Է ծնողացն թէ՝ ինչ որ պատեհ է ինձ՝ կամիմ հանց բան առնել՝ որ դուք այլ ապրիք, և ես այլ։ Ասացին ծնողքն, դու գիտես որդեակ։ Ասաց մանուկն. կամիմ ծախել զձեզ ՚ի յայս Թագաւորիս, որ համնիք բարուն. և ձեր գնովն ինձ բարի լինի. և ես ջանամ շուտով ազատել զձեզ. դուք ի՞նչ կու հրամայէք։ Ասացին ծնողքն, դու գիտես որդեակ։ Իսկ էառ մանուկն զհայրն և զմայրն, և գնաց առ Թագաւորն։ Ասաց Թագաւորն մանկանն թէ՝ քանի՞ ծախես։ Ասէ մանուկն առ Թագաւորն. տուր ինձ այս կին ծառայիս գին՝ աղէկ ձի և սլէհ իւր սարօքն։ Իսկ այր մարդոյն գին՝ տուր ինձ աղէկ հալաւ և զգեստ պատուական։ Հրամայեաց Թագաւորն՝ զինչ որ մանուկն խնդրեաց իւր ծառայիցն գին, որ լիակատար ետուն զամէնն. և թուր մի ոսկի գօտւով։ Իսկ էառ մանուկն զձին, զոր պարգևեաց նմա Թագաւորն։



Ապա

Ապա ասէ Թագաւորն մանկանն. այլ ի՞նչ կուզես լինէն՝ խնդրեա՛, որ տամ քեզ։ Ասէ մանուկն. Ձիփլօրի այլ խարճլըխ տուր։ Հրամայեաց Թագաւորն և տուին։ Դարձեալ ասէ Թագաւորն. այլ ի՞նչ կուզես լինէն։ Ասէ մանուկն. հրաման տուր ինձ, որ խօսիմ ընդ քո ծառայիցն՝ որ քինանէ գնեցեր, որ զիւրեանց օրհնութիւն առնում։

Հրամայեաց Թագաւորն. գնա՛ և խօսեա՛ց։ Եւ իմացաւ Թագաւորն, որ իւր ծնողքն էին։ Գնաց մանուկն, և անկաւ ’ի յոտս ծնողացն և ասէ. մի՛ հոգայք, թէ ա՜ծ կամենայ, զձեզ շուտով կազատեմ։

Եւ ծնողքն օրհնեցին զզաւակն իւրեանց։

Եւ մանուկն յիշեաց զա՜ծ, և մեկնեցաւ ’ի ծնողացն լալով. և գնաց գ՟ օր և գ՟ գիշեր ’ի մեծ դաշտ մի։ Եւ ’ի գնալն՝ հանդիպեցաւ ընտիր մանուկ մի. բարևեցին զմիմեանս, և ընկերեցան ’ի ճանապարհին։ Եւ երբ որ ընկերեցան՝ նա միւս մանուկն իմացաւ զայս մանկան խօսքն, որ ըզհայրն և զմայրն ծախեր էր։ Եւ ասաց նմա. գիտացի՛ր եղբայր՝ որ իմ Թագաւորն զիս խիստ կու սիրէր. և թուղթ աւետեաց ետ, որ տանիմ առ կղզեաց Թագաւորն,

ւորն, և առնում պարգևս մեծամեծս․ այլ տեսանեմ զքեզ, զի դու խելօք մանուկ ես, և լաւ ձիաւոր քան զիս․ առ ըզթղթերդ, և դու տար այն թագաւորին․ զի քեզ շատ բարիք կու պարգևէ․ զինչ որ ած ինձ նասիպ արերէ՝ քեզ լինի․ և ես յայս դաշտս կու կենամ, մինչև որ դու գաս առիս: Առ մանուկն զայն թղթերն, և 'ի սէկէքէան եդիր, և գնաց 'ի ճանապարհն իւր 'ի մեծ դաշտ մի: Այս յանկարծակի յիշեաց զհայրն ու զմայրն, և շատ ելաց․ և 'ի շատ հոգոցն ննջեաց 'ի վր ձիոյն և ձին 'ի ճանապարհէն ելաւ, և կորեաւ 'ի քնոյն զճանապարհն: Այս յանկարծակի զարթեաւ 'ի քնոյն․ և էր ծարաւել ինքն և ձին․ և ջուր ոչ կայր․ այլ՝ մոլորել 'ի շուրջ գայր: Այս գտաւ ջրհոր մի հին ժամանակաց․ և 'ի ծարաւոյն կամէր 'ի ջրհորն անկանիլ․ տայ էհան զսէկէքէան՝ որ զթղթերն 'ի մէջն էր դրեր, և կապեաց պարան, և եհան ջուր․ խմեց ինքն, և խմցոյց իւր ձիոյն, և պահ մի հանգեաւ․ Այս ապա ասաց 'ի միտս իւր թէ՝ կարդամ զայս թղթերս, և սկսաւ կարդալ:

Այս էր գրած այսպէս։

Այս անուն կղզեաց թագաւորի ողջոյն



մի

սիրոյ. գիտացիր եղբայր, որ այդ Թղթա-
բերդ անհաւատ մարդ է, և մեզ նենգա-
ւոր. դա մեծ էր առ մեզ. և զիմ գանձի
հաւատացնող. դա եկաւ առ դուստր իմ, ու
վնաս գործեաց. և ես կամեցայ զինքն կո-
րուսանել. այլ պատրաստեցի քեզ, որ
մարդ զմեր խափքուէին չիմանայ. և առա-
քեցի առ քեզ, որ կորուսանես զինքն,
Թէ զմեր սէրն կուզես։

Կարդաց և իմացաւ մանուկն, որ ՚ի վր̃
իւր գալոց էր մահն. պատառեաց զԹուղ-
թերն, և գոհացաւ զԱյ. և օրհնեաց զիւր
ծնօղքն, որ զինքն ուսումնագէտ արա-
րին, զի գիտութէն իւր ապրեցաւ. և ա-
ղաչեաց զԱծ, որ զճանապարհն գտանէր։
Եւ մոլորեալ շուրջ գայր զտիւ և զգի-
շեր. և հարցանէր զանուն Թագաւորին,
և զայն քաղաքն՝ որ գնալոց էր. և գտաւ
ու մտաւ ՚ի քաղաքն։ Եւ էր այն քաղաքին
Թագաւորն մեծ, և քաղաքն բարելի։
Եւ իջաւ մանուկն ՚ի տուն պառաւի միոյ,
հանգեաւ սակաւիկ մի. և սկսաւ հար-
ցանել և քննել զքաղաքն, և զքաղաքին
գնացքն, և զԹագաւորին։

Եւ պառաւն ասէ Թէ՝ այս քաղաքիս
Թագաւորն դուստր մի ունի խիստ ան-


նր

նըման և գեղեցիկ և իմաստուն՝ որ չիկայ իւր նման. որչափ 'ի տարիք է հասեր՝ նա իննսուն և ինն թագաւորի որդի է սպաներ. Ասէ մանուկն. ինչ պատճառի համար սպանանէ. Ասէ պառաւն. որդեակ կասէ թէ՝ ով զիս յաղթէ իմաստութ̃բ՝ ես զնա առնեմ ինձ այր. և թէ ես յաղթեմ զնա՝ սպանանեմ զինքն: Եւ այդ պատճառովդ յաղթէ զթագաւորաց որդիքն և սպանանէ. և զգլուխն՝ իւր չարտախին վր̃ կու տընկէ: Եւ իւր չորտախն 'ի վր̃ ա̃մ քաղաքին կու նայի. և ունի թախտ ոսկի ակամբ և մարգարտով շարած. անդ կու նստի և հայի առ մարդիկ 'ի ղաֆեսէն 'ի վայր. որ մարդ զինքն չկարեր տեսանել: Եւ ունի պառաւ մի թարգմանօղ, որ նա խօսի 'ի հետ մարդոյ, որ առ ինքն մտանէ: Լսեց մանուկն զայն խօսքերն 'ի պառաւէն՝ և գիշերն 'ի բուն քուն չեղաւ: Յոր̃ լուսացաւ գնաց 'ի բաղանիքն. հագաւ զիւր ոսկեկար հանդերձն, և անուշահոտեցաւ մշկով և վարդէ ջրով: Եւ գնաց 'ի թագաւորի դըստորջ դուռն. և ուզեց հրաման 'ի մօտ առ թագուհին մըտանել: Եւ մարդիքն՝ որ 'ի դուռն էին՝ խրատ տուին մանկանն, թէ պատրաստ

կացիր, զի շատ թագաւորի որդւոց գլուխ
է առեր։ Իսկ երբ մանուկն մտաւ 'ի ներս՝
բարև ետուր. գրեն ոսկի աթոռ, և նստաւ
մանուկն։ Իսկ գիտաց աղջիկն՝ որ վն այն
բանին էր եկեր առ ինքն։ Ուղարկեց խա-
պար հօրն և մօրն և նայիպնուն և իշխա-
նացն 'ի քնդիր, և ժողովեցան ամքն։

Ապա ասաց աղջիկն ընդ իւր թարգման
պառաւն թէ՝ ասա այդ մանկանդ՝ կուզէ՞,
որ տամ քայն կթղայէն, որ իւր ընկեր-
տացն եմ տուեր։ Ասաց մանուկն թէ՝
այ կամքն լինի։

Ասէ աղջիկն ընդ հօրն և ընդ մօրն և
ընդ նայիպնուն և ընդ իշխանուն, որ
վկայ լինին այնմ բանին. որ թէ մանուկն
յաղթէ զթագաւորին դուստրն՝ առնու
զնա իւրն 'ի կնուն. և թէ դուստրն թա-
գաւորին յաղթէ զմանուկն՝ առնէ նմա
ոպ զայլոցն, որ սպանեց։ Հաւանեցաւ
մանուկն, և ամքն վկայ կացին։

Հարցմունքն է։

Ասէ աղջիկն. ո՞վ է քո հայրն։
Ասէ մանուկն. հողն և հուրն։
Ասէ աղջիկն. ո՞վ է քո մայրն։
Ասէ մանուկն. հողն և անձևն։
Ասէ աղջիկն. յոր կենդանակերպն ես
Ա ծնեալ։

Ըսէ մանուկն. խոյքն ատրքն եմ ծնել.
Ըսէ աղջիկն. ո՞վ է քո դայեակն.
Ըսէ մանուկն. այն է իմ դայեակն՝ որ նա զիս կու տանէ, և ես զնա չէմ տեսա- ներ. նա զիմ ձայնն կու լսէ, և ես զնոր ձայնն չեմ լսեր.
Ըսէ աղջիկն. այդ տղայոց հարցմունք է, թող այդ կենայ.
Ըսէ աղջիկն. ո՞րն է առաջին արիւնն՝ որ անկաւ յերկիր.
Ըսէ մանուկն. աբելի արիւնն է, զոր կայէն սպան.
Ըսէ աղջիկն. ո՞րն է երեք բան, որ կե- րան և խմեցին և մեռան. և չէր ծներ գերեզմանքն մայր.
Ըսէ մանուկն. ադամ և եւայ է, և գառն աբրահամու, և մէկ այն խոյն՝ որ քո̅ ՚ի սաբեկայ ծառէն արար կախ.
Ըսէ աղ՛՛. դու մէկ աւելի ասացիր.
Ըսէ աղջիկն. ո՞վ որ էին՝ որ ծնեալ էին և ոչ մեռան.
Ըսէ մանուկն. ենովք և եղիա է, որ ոչ մեռանին մինչև ՚ի գալուստ նեռին.
Ըսէ աղջիկն. այն ինչ թռչունն է, որ ուտէ յերդ և գարի.
Ըսէ մանուկն. այդ մորեխն է.


Ըսէ

Ասէ աղջիկն . այն ի՞նչ է, որ քանի ապ-
րի, ձանձիր կու շատանայ և ապրի:
Ասէ մանուկն . գայլ ագռաւն է . զի
յորժամ կու բերէ ղձագն՝ սովատակ է
մինչև Ը օրն, և մայրն կու փախչի . և ե-
րեք աւուրն յետոյ կու սևանայ, և մայրն
գայ առ ձագն իւր:
Ասէ աղջիկն . այն ի՞նչ էր, որ քանի ողջ
էր, յերդ ու գարի կուտէր . և երբ մե-
ռաւ՝ մարդոյ միս և արիւն կերաւ:
Ասէ մանուկն այդ այն է, որ սամսոն
մանուկն իշոյ չէնկէ մի էառ 'ի ձեռն, և
այնով հազար մարդ սպանեց:
Ասէ աղջիկն . այն ի՞նչ ծառ էր, որ ձիղ
և տերև էր, միս և արիւն դարձաւ:
Ասէ մանուկն . այդ մովսիսի գաւազանն
էր . որ քանի ծառ էր՝ ձիւղ և տերև ու-
նէր . երբ որ օձ դարձաւ՝ միս և արիւն եղև:
Ասէ աղջիկն . այն ի՞նչ երկու հակառակ
են, որ զիրար կու սիրեն:
Ասէ մանուկն . գիշերն ու ցորեկն է:
Ասէ աղջիկն . այն ո՞վ էր, որ 'ի մամն մերձե-
ցաւ . նա մամն ասաց թէ՝ ես կոյս եմ:
Ասէ մանուկն . աբելի մարմինն էր, որ 'ի
հողն բերին . հողն ասաց թէ՝ ես կոյս եմ:
Ասէ աղջիկն . այն ո՞րն էր, որ ԺԵ տարի


թա

Թագաւորեաց · երբ ժբ մտաւ՝ նա հի-
ւանդացաւ · երբ Լ մտաւ՝ նա մեռաւ,
և դարձեալ ողջացաւ ։

Ո՞րն է մանուկն · այդ լուսինն է ։

Ո՞րն է աղջիկն · ի՞նչ գերեզման էր, որ շար-
ժուն և գնայուն եղև ։

Ո՞րն է մանուկն · յունան մարգարէն էր,
որ ձուկն կլաւ · շարժուն և գնայուն եղև ։

Ո՞րն է աղջիկն · այն ո՞վ էր, որ ջուր և կե-
րակուր տարաւ քաղցելոց · նա զկերա-
կուրն Թողին, զտանօղն կերան ։

Ո՞րն է մանուկն · դանիէլ մարգարէն էր,
որ առիւծոցն տարան · զդանիէլ Թողին·
ու զտանօղն կերան ։

Ո՞րն է աղջիկն · այն ո՞վ էր, որ մեռաւ, ոչ
մարմինն ՚ի հող մտաւ, և ոչ հոգին առ
ա̃ծ գնաց ։

Ո՞րն է մանուկն · ղովտայ կինն էր, որ աղ
դարձաւ · ոչ մարմինն ՚ի հող մտաւ, և ոչ
հոգին առ ա̃ծ գնաց ։

Ո՞րն է աղջիկն · այն ի՞նչ ծառ է, որ ունի
ժբ ճիւղ · և ամէն ճիւղ Լ տերև · և պ-
տուղնր սև ու սպիտակ ։

Ո՞րն է մանուկն · ծառն՝ տարին է · ժբ
ճիւղն՝ ամիսն է · տերևն՝ Լ օրն է · պտուղն
սև ու սպիտակ՝ տիւ և գիշերն է ։



Ո՞րն է

Ասէ աղջիկն. այն ո՞րն էր, որ կու քար-
կոծէին. ո՛չ մարդ էր՝ ո՛չ քաջ էր՝ և ո՛չ
հրեշտակ, և խօսեցաւ զէտ մարդ:
Ասէ մանուկն. Երեմիա մարգարէին վէմն
էր, որ կու քարկոծէին, խօսեցաւ զէտ
մարդ. իբր թէ ի՛նքն է Երեմիա մր̄գրէն:
Ասէ աղջիկն. զի՞նչ էր այն՝ որ խօսա
եւ ժողովրդեանն. ո՛չ քաջ էր, ո՛չ հրեշ
տակ, և ո՛չ ադամայ որդի, և խօսեցաւ
զէտ մարդ:
Ասէ մանուկն. մրուջիմն է, որ ա̄ծ յի-
շեաց 'ի գիրն և ասաց. գնացէ՛ք 'ի ձեր
դադարքն մտէք. սողոմօն ժողովքէ ա-
րեր՝ որ 'ի հոտ չերթայք:
Ասէ աղջիկն. այն ո՞վ էր, որ էլչի առա-
քեաց ա̄ծ. ո՛չ քաջ էր, ո՛չ հրեշտակ, և
ո՛չ ադամայ որդի:
Ասէ մանուկն. դայլ ագռաւն էր, որ ե-
կաւ առ ադամ, երբ կայէն զաբէլ սպա-
նեց, և ադամ չգիտէր, թէ զի՞նչ անէր.
եկին երկու ագռաւ, և մէկն զմէկն ըս-
պանեց ու թաղեց, ապա ադամ ուսաւ,
և փորեց զգետինն, և թաղեց զաբէլ:
Ասէ աղջիկն թէ՝ արի՛ ե՛լ ու գնա. այսօր
խայլխսեցար 'ի ձեռացս. վախ կուսայր
մանկանն:

Ասէ մանուկն. թէ այն ածն՝ որ փրկեաց
զիս այսօր՝ կարօղ է, որ ՚ի վաղիւն այլ
փրկէ. և ելաւ ու գնաց խնդալով:

Յորժամ տեսան՝ ամքն զարմացան ընդ
ապրիլն. զի անկից ՚ի զատ այլ մարդ չէր
ապրեր մինչև ՚ի սա.

Գնաց մանուկն ՚ի յիւր իջևանքն. և տե_
սաւ, զի կուլայր պառաւն դառնապէս:
Իսկ պառաւն երբ տեսաւ զմանուկն՝
խիստ ուրախացաւ և ասաց. որդեակ դու
բարով եկիր. այսօր նոր ծնար ՚ի մօրէդ.
ես վախեցայ, թէ զքեզ այլ կու սպա_
նանէ. և քո խղճուն ես մեռանէի:

Ասէ մանուկն թէ՝ ած փրկէ՛ զիս ՚ի նմանէ՝
Վաղիւն երբ լուսացաւ՝ գնաց մանուկն
՚ի դուռն թագուհւոյն. ետուր բարև և
ասաց թէ՝ գիշերս բարւով լուսացաւ քեզ:
Իսկ նորա դրին ոսկի աթոռ, և մանուկն
նստաւ:

Ասէ աղջիկն. այն ո՞վ էր, որ մէկն զմէկն
սպանեց. մեռնօղն ՚ի դժոխքն գնաց, և
սպանօղն ՚ի յարքայութին:

Ասէ մանուկն. Ղամէք է, որ զԿայէն
սպան. Կայէն ՚ի դժոխքն գնաց, և Ղա_
մէք յարքայութին.

Ասէ աղջիկն. այն ո՞րն էր, որ բուսն



ձէր

Ճերմակ էր, նա սև դարձաւ ։

Ասէ մանուկն · Նոյեայ որդին է · երբ որ զանէծքն ընկալաւ՝ նա սևացաւ ։

Ասէ աղ″ · այն ով էին, որ կերան և խմեցին և մեռան, և չէր ծներ զիւրեանքն մայր ։

Ասէ մանուկն · Ադամ և Եւայ էր ։

Ասէ աղ″ · այն ով էր ; որ էգն յորձէն ծնաւ ։

Ասէ ման″ · Եւայ է՝ որ ծնաւ յԱդամայ ։

Ասէ աղ″ · ով է այն, որ ՚ի գայլոյ բերանն դրաւ՝ նա չկերաւ ։

Ասէ մանուկն · Յովսէփ գեղեցիկն է ։

Ասէ աղ″ · այն ինչ տեղ է, որ քանի ա͞շ ըստեղծեր է ա͞ծ, նա արեգակն ՚ի վ͞ր չէ՛ դիպեր ։

Ասէ մանուկն · այն ծովու յատակն է, որ Մովսէս պատառեաց ։

Ասէ աղ″ · այն ինչ երկուք է, որ քանի ապրի կու մեծանայ ։

Ասէ մանուկն · չկայ մեծ քան զձուկն ՚ի ծովին, և զօձն ՚ի ցամաքին ։

Ասէ աղ″ · այն ինչ բ͞ սիրելի են, որ զի-րար կու ատեն ։

Ասէ մանուկն · հոգին և մարմինն է ։

Ասէ աղ″ · այն ինչ է, որ զմարդ հարուստ կանէ, ու զաւնայ աղքատ կանէ ։

Ասէ

Ասէ մանուկն․ տպրշուտի ձըձին է, և
իւր խելքն։
Ասէ աղ"․ այն ինչ արիւն է հալալ ուտելոյ։
Ասէ մանուկն․ այդ ձկանն է։
Ասէ աղ"․ այն ի՞նչ էր, ոչ կերաւ ոչ
խմեց 'ի կենդանութեն․ երբ մեռաւ՝ կե_
րակուր կերաւ հող՝ և խմեց ջուր։
Ասէ մանուկն․ մովսիսի գաւազանն էր․
որ քանի ծառ էր՝ կերակուր ոչ ուտէր․
երբ կտրեցաւ ծառէն և օձ դարձաւ՝
նա կերակուր կերաւ զհողն, և խմեց
զջուրն, և կտրեց զծովն։
Ասէ աղ"․ տուն մի կայ մէջն ոսկի և դուռն
արծաթ․ երբ որ պատն խոտի՝ նա ամէն
մն 'ի վր գայ, չէն կարեր շինել։
Ասէ մանուկն․ այդ հաւկիթն է․ երբ որ
կոտրի՝ այլ չի շինուիր։
Ասէ աղ"․ արի՛ եկ՛ ու գնա՛․ այսօր այլ զեր
ծար 'ի ձեռացս․ փաղիճն տամ քեզ յայն
կթխայէն, որ մէկ այլ ընկերտացդ տուճի։
Ասէ մանուկն․ աստուծ ողորմած է, և ելաւ
գնաց խնդալով։
Երբ լուսացաւ՝ գնաց 'ի դարպասն 'ի
դուռն թագուհւոյն․ երեսն բարև թէ՝
գիշերս բարով լուսացաւ քեզ։
Եւ հրամայեաց աղ", որ դրէն զոսկի ա_
թոռն, և նստաւ մանուկն։

Ասէ աղջիկն. ո՞վ է այն՝ որ կու կըռուի լծելով, և կու զարնէ խուրովի, նա չունի ձեռք և ոչ ոտք:

Ասէ մանուկն. այդ ձուկն է:

Ասէ աղ՛՛, ո՞վ է այն, որ կերակուր ու-տէ մինչ մեռեալ 'ի տապանն էր, և եղև տապանն կենդանւոյ:

Ասէ մանուկն. յոբ երանելին էր. որ քանի ցաւագնեալ էր՝ նա մեռեալ էր և կերակուր ուտէր. և յետոյ առաւ զխուր գեղեցկութին կրկին:

Ասէ աղ՛՛. այն ո՞վ էր, որ խրատ ետ մար-դոյն. ոչ քաջ էր, ոչ մարդ. և ոչ հրեշտակ:

Ասէ մանուկն. բալաղամայ էշն է. ասաց թէ՝ դարձիր յետս, և մի՛ երթար անի-ծել զիէլ:

Ասէ աղ՛՛. ո՞վ էին, որ երկու խապարբեր ուղարկեցին. ոչ քաջ էր՝ ոչ մարդ, և ոչ հրեշտակ:

Ասէ մանուկն. ագռաւն ու աղաւնին էր, որ նոյ ուղարկեց խապար բերելու:

Ասէ աղ՛՛. ո՞վ ոք էին այնոքիկ, որ մե-ռան և կացին բ̃ մահ և բ̃ կենք գ̃ճ տարի:

Ասէ մանուկն. է̃ մանկունքն էին, որ փախեան 'ի թագաւորէն, և ննջեցին 'ի այրն. և յետ գ̃ճ տարւոյ յարեան:

Ասէ այլ․ ո՞վք էին, որ երբ յեգիպտոս մտան, հ̃ե̃ էին և երբ ելան, զ̃ ճռ̃ եղան։

Ասէ մանուկն․ յակոբ նահապետի որդիքն էին։

Ասէ այլ․ անբուսն անծընին բարձին, ՙանդադարին երդօքն անցուցին։

Ասէ մանուկն․ անբուսն՝ աղն է․ անծին՝ ջորին է․ անդադար՝ ջուրն է․ երդիք՝ կամուրջն է։

Ասէ այլ․ այն ի՞նչ է, որ ա̃ծ ետ, վաղչմեն ելաւ ցանեց զցանսն․ և յամէն պտուղ երթայր և ասէր՝ մեծացիր ա̃յ հրամանաւն․ և զինչ տարին որ կու մեծանայր՝ նա ամէն սահաթ մէկ մէկ տարուչափ մեծացաւ ՚ի մէկ օրն․ և ՚ի մէկ այլ օրն արար՝ զինչ որ իւրեան պիտոյ էր։

Ասէ մանուկն․ այդ այն ծառն է՝ որ տնկեցին ՚ի յայգին կիպարի․ զի ա̃ծ առաքեաց ձեռովն գաբրիէլի հրեշտակին առ Նոյ և ասէ․ տար ցանէ զայդ՝ որ լինի ծառ, կտրէ և տապան շինէ․ մուտ ՚ի ներս դու և որդիքն քո, կանայք որդւոց քոց և կին քո ընդ նմա․ և արարին այնպէս՝ և ապրեցան ա̃մքն։

Ասէ այլ․ երեք բան ի՞նչ էր՝ որ խօսեցան, որ յայս աշ̃ս չկայ։



Ասէ

Ասէ մանուկն . երեք բանքն այս է . առ̃ ծովն է՝ որ խուփ չունի . առ̃ երկինքն է՝ որ սիւն չունի . առ̃ հաւն է՝ որ կաթ չունի . և մէկ այլ մարդոյն ձեռացն մէջն է՝ որ մազ չունի ։

Յայս ճուղապէս այլվի փախեցաւ աղջիկն 'ի կըտրճէն և ասէ . այլվի դու մէկ աւելի ասացիր ։ Նու ասաց արի ե՛լ ու գնա . այսօր այլ զերծար 'ի ձեռանէս . վաղն հաւցընեմ զքեզ քո ընկերոացն ։

Ասէ մանուկն . յա̃ծ եմ ապաւիներ . ինքն ողորմած է , ողորմի ինձ ։

Ելաւ խնդալով և գնաց ուրախութ̃ 'ի յիւր իջևանքն ։

Երբ վաղի՞ն լուսացաւ՝ նա եկաւ 'ի դուռն թագուհւոյն բարև ետ ։

Նու ասէ աղջիկն թէ՝ գիշերս ե՞րբ բարով լուսացաւ և քեզ . և դրին զոսկի աթոռն և նստաւ ։

Ասէ մանուկն . հրամայեա՛ մեծ թագուհի , այլ ինչ կու հրամես ։

Ասէ աղ՛՛ . հիմի հրամանքն քո է ։

Ասէ մանուկն . ո՞վ է այն՝ որ հարուստ էր աղքատացաւ , և յիւր աղքատութեն հագաւ զիւր հայրն , ու հեծաւ զիւր մայրն . և գնաց որ զիւր ապրանքն գտանէր՝

նէր՝ նա մանչն հասաւ՚ի վր՛, առաւ զմանչն՚ի
ձիոյն վր՛. խմեց մանչոյն ջուր՝ և խմցոյց իւր
ձիոյն. ինքն այլ տպրեցաւ՝ և ձին այլ։
Իսկ աղջիկն չկարաց խօսիլ, զի ոչ գի-
տէր։ Ապա ասաց ընդ մանկանն. այ-
սօր գնա, վաղիւն տամ զայդ պատաս-
խանիդ. այդ դժար զրոյց է։
Իսկ մանուկն ելեալ գնաց ՚ի յիւր օ-
թևանքն։
Ասէ աղջիկն ընդ իւր թարգման պա-
ռաւն թէ՝ գնա՚ի շուկայն. և առ սպիտակ
հաց, և գէր սագ մի. և հաւ խորոված. և
զփորն լից շաքրով. և երկու աման անուշ
գինի խիստ ուժով լինի։ Գնացին ծա-
ռայքն, և կատարեցին զկամքն նորա։
Իսկ երբ դառն քուն եղան ա͞մքն, աղջիկն
հագաւ զիւր ոսկէկար հալաւն և անու-
շահոտեցաւ. Իսկ ը͞ գեղեցիկ աղջիկ այլ
՚ի հետ իւրն առաւ. Իսկ ծառայիցն հրա-
մայեաց, որ բարձին զկերակուրն անուշա
համ և զըմպելին. և գնացին յիջևան ման-
կանն, և զարկին զդուռն։
Ասէ մանուկն. ո՞վ ես դու։
Ասեն ծառայքն. պարոն գիտենաս, որ
աղջիկ եմք ՚ի դարպասէ թագաւորի. և
զինչ լուսինն արեգական սիրոյ տէր է և

 մէք

մեք քեզի սիրոյ տէր եմք, այն պատճառին
համար կամիմք տեսանել զքեզ ։
Ասէ մանուկն՝ գնա՛ ՚ի զատ ․ ա՟ծ գի-
տէ, որ նա չի մտանէր առիս ․ և ես ոչ
գիտեմ զնա ։
Եւ նոքա աղաչանօք պնդեցին զերես-
ներն՝ թէ ոչ երթամք ՚ի դրանէս, մինչև
տեսանեմք զքեզ ։
Եւ մանուկն եթող մտանել ՚ի ներս ։
Եւ մտեալ աղջիկն, եբաց զերեսն ։
Եւ երբ տեսաւ մանուկն զերեսն աղջկան՝
վաղեցաւ ՚ի սիրոյն ։
Եւ աղջիկն նստաւ, և նստոյց ընդ իւր
զմանուկն ։
Ասէ աղջիկն ցմանուկն ․ ունի՞ս կերակուր
ինչ ուտելոյ, բե՛ր որ ուտեմք ․ և անուշա
համ գինի՝ որ խմեմք և անուշանամք ։
Զձայնն փոխէր էր աղջիկն, որ մանուկն
չէր կարէր ճանաչել զնա ։
Ասէ մանուկն ․ ա՟ծ գիտէ՝ որ չունիմ ինչ
՚ի ժամուս յայսմիկ, զի չգիտէի զձեր
գալն առ իս, որ պատրաստէի ձեզ կերա-
կուր լաւ ։
Ասէ աղջիկն ծառայիցն իւրոց ․ բերէ՛ք
զինչ որ ունիմք ուտելոյ ․ և բերին դրին
սեղան զանազան անուշ կերակրով, և
նրա

Նստան անուշ 'ի խում. և ամպակ գինւով
արբուցին զմանուկն. և աղջիկն անուշ
զրոյց տայր, և ժղլեցնէր զմանուկն:
Ասէ մանուկն. հրամայէ՝ որ պառկիմք:
Ասէ աղջիկն մանկանն, թէ զիս կուզես՝
Նա պատմէ զայն խօսքն, ինչ որ երէկ
թագաւորի դստերն ասացեր:
Ասէ մանուկն. չունիմ կարողութի՛ ա-
սելոյ. զի կու վախեմ, թէ մեռանիմ այլ
բան հարցուր որ ասեմ:
Նա երդուեաւ յուժ, թէ զայն բանն մինչ
ոչ լսեմ 'ի քէն՝ ոչ կատարեմ զկամս քո.
և սկսաւ խաղալ ընդ նմա:
Իսկ մանուկն բորբոքեցաւ 'ի խիստ սի-
րոյն, և յաղթեցաւ 'ի գինւոյն. և ասէ
ցաղջիկն՝ արի, որ պառկիմք:
Ելաւ աղ՛՛, և եհան զշարէշապկքն՝ և եդ
'ի սնարքն 'ի գլխոյն ներքև. և սկսաւ խա-
ղալ 'ի հետ մանկանն:
Իսկ մանուկն յաղջկան սիրոյն և 'ի գինւոյն
թմրեցաւ, և մեկնեաց զխօսքն:
և աղջկանն չկարաց առնել ինչ:
Իսկ աղջիկն խնդաց 'ի միտքն. սահեցաւ
յանկողնոյն, և ելաւ գնաց խնդալով.
և շարէշապկին պէտ չարաւ. և խիստ
ուրախացաւ թէ՝ ուսայ զհանելուկն. և


ինձ

ինձ իւր մի չկարաց առնել. և ընդ լուսա-
նալն՝ սպանանել տամ զինքն։

Իսկ մանուկն 'ի վաղվնէն զարթեաւ, և խելքն 'ի վերան եկաւ, նա իմացաւ՝ որ զինքն խաբած էր, խիստ տրտմեցաւ. յետոյ տեսաւ զհալաւ աղջկանն՝ որ մոռացեր էր, և շատ ուրախացաւ, և էառ պահեց։

Իսկ ելեալ գնաց 'ի դարպասն, ետ բարև,
և նստաւ յոսկի աթոռն։

Իմացաւ մանուկն՝ որ թագաւորին դուստրն
էր, որ իրիկունն մօտն էր գնացեր։

Իսկ աղջիկն ուղարկեց խապար հօրն և
մօրն և իշխանացն, և եկին միաբան։

Իսկ մանուկն յոտն ելաւ, ծունր եած
թագաւորին և նստաւ։

Ասէ աղջիկն թէ՝ ասեմ զերեկեան բանն, որ քիս հարցար. և սկսեալ ասաց զամէնն
կարգաւ, որ իրիկունն լսեր էր։

Իսկ ամենեքեան զարմացան ընդ գիտու-
թիւն աղջկանն։

Ասէ մանուկն ընդ թագաւորին առաջի
ա̃մ իշխանացն։

Մեծզօրակալ թագաւոր՝ քո դուստրն ինձ երեք օր բան հարցաւ, և ես պատասխանի տուի. ես այլ իւրմէն բան մի հարցանեմ. եթէ գիտենայ՝ նա զիս յաղթեր
է.

է. և թէ ոչ ես եմ յաղթեր զնա։
Ասէ թագաւորն. այսօր հաւան եմք։
Իսկ վկայ կացին ամ իշխանքն՝ որ այլ ա-
ւելի ասուլիս չառնեն։
Ասէ մանուկն առ աղջիկն թէ՝ որն է այն
թռչունն. որ կալայ զինքն և զենեցի,
և զփետուրն պահեցի. զինքն խորովեցի
և դրի առաջևս թէ ուտեմ, և այն թռ-
չունն'ի հետն ունէր այլ ցեղ թռչունք-
ներ. ապա իւր փետուրն էր գեղեցիկ
որպէս զոսկի՝ նա յանկարծակի թռաւ
և գնաց։ թէ չէք հաւատար նա զփե-
տուրն բերեմ որ տեսնուք.
Աղջիկն երբ որ զայն լսեց՝ խիստ վախե-
ցաւ. գիտէր որ զիւր խապարն կու տայր։
Ասէ՝ այդ ինչ դիժար զրոյց է, չեմ կա-
րեր գիտնալ. գիտեմ որ յաղթեցեր զիս.
ուզէ՞ զինչ որ կուզես, տամ քեզ։
Ասէ մանուկն. այլ իրք չուզեմ քան
զքեզ աւելի։
Իսկ իշխանքն վկայեցին և հաւանեցան։
Պսակեցին և արարին Է օր հարսանիք։
Իսկ ետ թագաւորն զկէսն թագաւո-
րութեան և զկէս գանձին. և որքան աշ-
խարհ ունէր ամենեցուն տիրեց։
Ապա ուղարկեց շատ մարդիկք և շատ

զանձս առ այն Թագաւորին, որ հայրն և մայրն՚ի քո՛յն էին, և եբեր զիւր ծնօղքն ՚ի մօտ իւրն ։

Եւ տեսեալ զմիմեանս ուրախացան, և գոհացան զԱյ ։

Եւ զասպընջականն պատուեալ՝ տարաւ ՚ի դարպասն և արար իւրն մեծ ։

Եւ Թագաւորն յետ մահուան իւրոյ՝ ա-մենայն գանձին և հեծելին և աշխարհին տէր կացոյց զմանուկն ։

Եւ Քի՛ մարդասիրին փառք յաւիտեանս յաւիտենից

Ամէն ։

## Վարք և պատմութիւն Աղէքսիանոսի ճգնաւորին.

ԱՅՐ ՄԻ ԷՐ Ի ՔԱ-ղաքն Ըստամպօլ մեծատուն յոյժ և իշխան մեծ, և հրա-մանատու բազում գաւառի . և էր ա-նունն նր՛ Եփրեմիանոս . և կնոջն Աննա ։ Եւ էր Եփրեմիանոս մեծ սիրելի ՚ի յաչս Թագաւորին իւրոյ ։ Սոքա էին հասեալ

'ի մերձ ծերութե՟, և ոչ ունէին զաւակ 'ի մ՟ր երկրի, որ ժառանգէր զինչս նց՟. և էին կարի տրտում և անմխիթար՝ վ՟ ժառանգութե՟։ Տիւ՟ և գիշեր հանապազ աղաչէին զա՟ծ վ՟ զաւակի։ Իսկ յաւուր միում կինն նորա՝ բազում աղախնեօք և ծառայիւք գնաց 'ի մեծ յեկեղեցին 'ի ս՟բն սոփիա, և կայր յաղօթս առ տ՟ր. և բարեխօսութե՟ ս՟բ ա՟ծածնին և ա՟մ ս՟բց՝ հայցէր 'ի ք՟է ժառանգ բարի։ Իսկ յետ աղօթիցն բազում ողորմութի՟ս առնէր աղքատաց և կարօտելոց, և քահանայիցն ա՟մցուն, և ելեալ գնայր 'ի տուն իւր։ Իսկ 'ի գնալն՝ 'ի ճանապարհին հանդիպեցաւ մին աղքատ խեղճ և ողորմելի և ասաց. տիկին՝ տուր ինձ ողորմութի՟ 'ի քո մէկ որդւոյդ արևուն։ Իսկ տիկինն հիացեալ 'ի միտս իւր, ասաց թէ, վա՜յ ինձ՝ զի ես անժառանգ եմ; և դա ինձ երանի տայ վ՟ որդւոյ. արտասուեաց և ելաց. և հանեալ ետուր նմա ողորմութի՟, և էանց գնաց 'ի տուն իւր։ Իսկ 'ի գիշերին յայնմիկ երևեկ 'ի տեսլեանն մին ծեր, և աւետեաց զաննայ և ասաց։ Կին դու՝ ահա կատարեցաւ խնդրուած քո առաջի ա՟յ։ Բայց զայդ արծաթապատ դարպասն՝ որ անթի-



ուկ

ոսկւով և արծաթով է զարդարե՛լ տացես
զնա ողորմութ̃ի աղքատաց և կարօտելոց։
Եւ ընդ առաւօտն ելեալ կոչեաց զ՛րի-
ցունս և զքահանայս, և արար մատաղս
մեծ և ընդունելութ̃իս։ Եւ պատմեաց
զտեսիլն իւր՝ առն իւրում եփրեմիանոսի։
Իսկ նա ոչ կամէր տալ, այլ դժուարա-
պէս ետ. քանզի սիրէր զդարպասն զայն,
որ 'ի Ճ̃ ԼԲ̃ լիտր յոսկւոյ էր շինեալ. և
յայսկոյս և այնկոյս մարգարտով շարեալ
և զարդարեալ։ Եւ չորս բազայ ԺԺ լիտր
արծաթոյ՝ էր թռուցեալ արծուանման.
Եւ մի այլ զթեւս իւր տարածեալ 'ի վայել
չութ̃ի անկողնոյ իւրոյ. և էր ԼԲ̃ լիտր ար-
ծաթոյ. Եւ առեալ զայս կին նր̃, կոչեաց
զոսկերիչս և արար զնա դրամս և դահե-
կանս. և քարոզ կարդաց և աւաց ժողովել
զա̃մ քահանայսն, որ ընդ իւր իշխանութ̃ն
կային. և զա̃մ աղքատս և զխեղս, և զկաղս
և զկոյրս. և պահել զնս̃ 'ի հրոտից ամսին
բոլոր մինչև յելս ամսոյն։ Եւ առեալ
ընդ իւր դ̃ ճ̃խ̃է̃ քահանայս. և իջեալ 'ի
վանսն հսկեցին զգիշերն մինչև ցառա-
ւօտն. և պատարագ մատուցին վս̃ որդե-
ծնութե̃ նր̃. և նա ետ նց̃ է է դահեկանս։
Եւ յետ երեք ամսոց գիտաց կինն զյղութ̃ի


իւր.

իւր. և ետ աւետիս առ այրն իւր. և յետ
ինն ամսոց ծնաւ կինն՚ի ծերութեան իւրում
արու զաւակ։ Եւ յարուցեալ այրն՝ ար-
ձակեաց զհրաւիրակս ընդ ամ̃ իշխանութիւ
իւր, կոչել զքահանայս և զեպիսկոպո-
սունս և զիշխանս։ Եւ արար մեծ ընդու-
նելութի̃, և մկրտեաց զմանուկն. և եդ ին
զանուն նր̃ ալեքսիանոս։ Եւ իբրև զար-
գացաւ մանուկն՝ ետ զնա հայրն յուսում̃
գրոց։ Եւ էր պատանին առատամիտ և ա-
ռատաձեռն քան զհայրն իւր, և էր գե-
ղեցիկ յոյժ. և ձայն նր̃՝ էր քաղցր իբրև
զքնարի. Եւ իբրև եղև պատանին ժ̃ը
ամոց՝ եղեն հայրն արջառս և ոչխարս բա-
զումն վ̃ն նր̃։ Եւ էր հսկայաձև և ըն-
թերցող ա̃ծային ոք գրոց, հին և նոր կտա
կարանացն. Մինչև եհաս լուր նր̃ յա-
պարանս թագաւորին։ Եւ յաւուր միում
ասէ թագաւորն ցեփրեմիանոս. ա̃ծ ետ
պտուղ որովայնի քումորոյ լուր նր̃ եհաս
առ իս. և է իմ դուստր զոր դու ճանաչես.
արդ՝ տուր զնա ինձ՚ի փեսայութի̃։ Ոսկի և
արծաթ իմ նմա եղիցի. և յետ մահուան
իմոյ՝ ժառանգէ զաթոռն իմ։
Եւ ել եփրեմիանոս յերեսաց թագաւո-
րին, և գնայր թմբկօք և պարուք՚ի տուն
իւր.

իւր ։ Իբրև լուաւ ալեքսիանոս զգա-
լուստ հօրն իւրոյ, յարեաւ ընդառաջ՝ և
երկիրեպագ նմա և ասաց ․ հայր իմ ալեօք
ծաղկեալ՝ զի՞է քեզ ։ Պատասխանի ետ
հայրն նր̃ և ասէ, խնդամ և ուրախ եմ
վն̃ քո ․ զի թագաւորն խոստացաւ մե-
ծացուցանել զքեզ ։ Պատասխանի ետ
ալեքսիանոս և ասէ ․ գրեալ է ՚ի նր̃ աւե-
տարանն, թէ որ դառնայ ընդդէմ ծնո-
ղացն իւրոց՝ տրտմութ͞ իջանէ ՚ի դժոխս ։
Բայց դու անարգեալ լիցիս յերեսաց ի-
մոց, զի յոյժ խզեցին բանք քո զսիրտ իմ ։
Եւ իբրև լուաւ եփրեմիանոս՝ դարձաւ
տրտում, և անկաւ առաջի թագաւորին
և ասէ ․ վա՜յ է ինձ այսօր՝ զի որդին իմ ար-
համարհեաց զհրաման թագաւորիդ և
զբանս իմ ։ Ասէ թագաւորն ցեփրեմիա-
նոս ․ մի՛ հոգար զայդ ․ ես՝ լինի որ դար-
ձուցանեմ զնա յայնպիսի խորհրդոյն ։
Եւ հրամայեաց թագաւորն կոչել զա-
լեքսիանոս ։ Եւ գնացեալ գտին զալեքսի-
անոս, որ ընթեռնոյր զաղմոսարանն՝ զոր
ունէր ՚ի ձեռսն իւրում ։ Ասէ պատանին՝
կոչէ զքեզ թագաւորն ։ Եւ յարուցեալ
գնաց ալեքսիանոս զհետ նր̃ յապարանս
թագաւորին ։ Ասէ թագաւորն ցալեքսիա-
նոս ․

նոս․ որդեակ՝ զամուսնութիւն պիղծ հա-
մարիս։ Պատասխանի ետ աղեքսիանոս և
ասէ․ ոչ թէ զամուսնութիւն պիղծ համա-
րիմ, այլ գրեալ է 'ի մբ աւետարանին,
թէ որ ոչ թողու զհայր՝ կամ զմայր՝ կամ
զկին՝ կամ զորդիս՝ կամ զագարակս՝ և
ոչ առնու զխաչն իւր և գայ զկնի իմ՝ չէ
ինձ արժանի։ Ոսկի և արծաթ կերակուր
է ժանկոյ․ և հանդերձ փափուկ ցեցոյ է
կերակուր։ Յայնժամ կոչեաց թագաւորն
զերկոտասան իշխանս տանուտէրս՝ որք
էին խրատատու թագաւորութեան իւրոյ․ և
ասէ ցնս՝ զինչ արարից, քանզի ոչ կա-
րացի դարձուցանել զաղեքսիանոս այնպի-
սի խորհրդոյն։ Պատասխանի ետուն իշ-
խանքն և ասեն․ ոչ թէ բանիւ նր վարի
թագաւորութիւն մեր, այլ հրամայեա ար-
կանել 'ի սենեակ։ Եւ թագաւորն հրա-
մայեաց արձակել զաղեքսիանոս․ և առա-
քեաց հրովարտակս ընդ ամ իշխանութիւ
իւր, ժողովել զամմն գալ 'ի հարսանիս․
Եւ իբրև գնացին քահանայքն կոչել զա-
ղեքսիանոս, զի պսակեսցեն ընդ դստեր
թագաւորին։ Լուաց աղեքսիանոս ընդդէմ
քահանայիցն․ մի՛ պնէք ինձ պսակ թառա-
մելի, զի զանթառամն շահեցայց․



Պա

Պատասխանի ետուն քահանայքն և ա-
սեն. որդեակ՝ թէպէտ 'ի թագաւորէն ոչ
երկնչիս, այլ 'ի մէնջ պատկառեա՛. և նա՛
լուռ եղև. և տարեալ պսակեցին ընդ դըս-
տեր թագաւորին. և արարին ժը՟ օր հար-
սանիս: Եւ ապա առեալ թագաւորին զձե
ռանէ մանկան և աղջկան՝ էարկ զնսա 'ի
սենեակ և փակեաց 'ի վր՟ նց՟ զեօթն դուռն:
Եւ յարուցեալ զմանուկն շիջոյց զկան-
թեղսն և զմոմեղէնսն, և ասէ ցաղջիկն
քո՛յր՝ պա՛րտ է ինձ և քեզ յաղօթս կալ և
ապա՛ ննջել 'ի միասին: Եւ ելեալ կացին
յաղօթս և ննջեցին սրբու՟թբ: Եւ յետ ժը՟
աւուրն անցանելոյ՝ ասէ աղջիկն ցալէքսիա
նոս. ընդէ՞ր ոչ յայտնեցեր զքեզ հօր և
մօր քոյ. զի բազում դեղատու բժիշկք
կան 'ի քաղաքիս: Ասէ ցնա ալէքսիանոս.
սահման է՝ զի այր մարդոյն համարձակ է
քան զկինն. պա՛րտ է ինձ երեք 'անգամ
խօսիլ, և քեզ ոչ տալ պատասխանի:
Եւ յարուցեալ եկաց յաղօթս և ասաց
այսպէս. տր՟ աբրահամու իսահակայ և
յակոբայ. որ փրկեցեր զերիս մանկունսն
'ի հրոյն բորբոքելոյ, փրկեա՛ և զիս յայս
գաղանի կնոջէս. զի մարմին կնոջ ոչ՟ հուր
է, և ես ոչ՟ խոռ առաջի հրոյ. կամ 'ի



յայ

յայրումն առ աջն սորա․ զի կին՝ ընտանի
գազան է չար, և ոչ տայ համբերել մար-
դոյ․ և լռեալ ննջեցին։ Եւ յարուցեալ
առաւօտուն ալեքսանդրոս տայ ցաղջիկն
որ՛ կոզզուք յաղօթս։ Եւ տայ աղջիկն ցա-
լեքսանդրոս․ ընդէ՞ր ոչ խօսիս ընդ իս և ո՞չ
բանիւ մխիթարես զիս։

Յանժամ ալեքսանդրոս ետ զմատանին
ոսկի՛ ի նա և ասէ․ քո՛յր՝ առ զսա և պա-
հեա՛ ՚ի քեզ յիշելեք․ մինչ ես երթայց ՚ի
դուռն եկեղեցւոյն յաղօթս, և պա-
գամ կատարեմ զկամս քո։ Եւ բացեալ
զդրունսն, ելեալ գնաց մինչև յանկելո-
նոյն․ և տեսեալ զաղքատիկ մի՝ որ ունէր
նա մաղեղէն մի զանձամբն իւրով․ ետ
նմա զծիրանին՝ և էառ զմաղեղէն նր և
ագաւ ինքն։ Եւ էր գին ծիրանւոյն երեք
հարիւր դահեկան։ Եւ աղքատիկն լծա-
ցոյց զայն։ Եւ առեալ ալեքսանդրոս այլ
կարկատուն կտաւ մի, էառ զգլխոյն
և ծածկեաց զերեսն իւր։ Երբև էանց
պահ մի գիշերոյն՝ իմացաւ կինն զխոր-
հուրդս նր․ ձիչ և աղաղակ բարձեալ լայր։
Եւ յարուցեալ դռնապանն ետես զդը-
րունսն բացեալ․ և վառեցին ջահս և ըն-
թացան ՚ի յորմնել։ Եւ ՚ի յորմնելն առ ոտն


կո

կոխէին զնա. և նա ասէր՝ մի՛ նեղէք զիս.
թէպէտ աղքատ եմ, այլ ա͞յ արարած եմ։
Իսկ խրրև էջ առ եզր ծովուն՝ եգիտ նաւ
մի որ երթայր յե͞ղմ. և ասէ ցնաւավարն.
որդեակ՝ տար զիս յե͞ղմ, և ես յաղօթս
առնեմ վ͞ս քո։ Ասէ նաւավարն. մղքա-
տիկ ընդէ՞ր ծածկես զերեսդ քո և ոչ
բանաս։ Իսկ նա ասէ, զի խոստակրօն վար-
դապետի աշակերտ եմ. և նա պատուի-
րեալ է ինձ թէ՝ մի՛ հայիր ՚ի մարդ և ոչ
յի͞ս, և մի՛ բանար զերեսդ։ Իսկ մտեալ ՚ի
նաւ հասին յարապօլիս. և անտի ՚ի կիպ-
րոս. և անտի յե͞ղմ. և յե͞ղմէ ՚ի լեառն
սինա՝ զոր ո͞ր խօսեցաւ ընդ մովսէսի։
Իսկ արար անդ զնշան խաչին ՚ի վ͞ր նր և
ասէ. սա եղիցի ինձ գերեզման և տուն
յարկի. և եկաց անդ ալէքսիանոս ամս
լ͞է. և էր կերակուր նր ՚ի ծայրից ծա-
ռոց և ՚ի խոտոց. և ըմպելի նր ջուր անձ-
րևաց։ Իսկ տապ սաստիկ ընկեց ՚ի սիրտ նր
զկարօտութի և զգութ ծնողացն, և այնու
նեղէր զնա։ Իսկ յարուցեալ էջ առ եզր
ծովուն, և եգիտ նաւ մի՝ որ երթայր յե͞ղմ.
և ասէ ցնաւավարն՝ տար զիս յե͞ղմ. և ես
վ͞ս քո աղօթս առնեմ։ Իսկ առեալ զնա
նաւուեցին, Իսկ իմացեալ դիւացն յարուցին
հողմ

հողմ և մրրիկ 'ի ծովն, և սկսաւ ալէկո-
ծիլ նաւն, և ոչ կարացին յաղթել։
Յայնժամ եկին Է դևք չարագոյն քան
զառաջինսն, և ասեն ցմիմեանս. մեք դորա
համբերութին գիտեմք. զի սորա զօրութին
առաւել է քան զՅոբայն. այլ զայս առ-
նեմք դմա չարութի. զի յարուցանեմք հողմն
սաստիկ 'ի վր ծովուն, և տանիմք զդա 'ի
դուռն տան Հօր իւրոյ. զի տեսանելով
զաղէտս ծնողացն իւրոց՝ տայցէ ծանօ-
թութի։ Եւ հանին հողմն սաստիկ 'ի վր
ծովուն, և տարեալ ընկեցին զնաւն 'ի
դուռն տան Հօր իւրոյ։ Իբրև գիտաց Ա-
լեքսիանոս, թէ սատանայի էր գործն՝ ասէ.
երթամ 'ի դուռն տան Հօր իմոյ, և անդ
կոխեցից զգլուխ սատանայի։ Եւ իբրև ել առ
եզր ծովուն՝ ետես զԵփրեմիանոս զՀայրն
իւր նստեալ 'ի վր ջորւոյ, զի երթայր 'ի
բաղանիս. և ընթացեալ ընդ առաջ երկիր
եպագ նմա և ասէ. օտար յերկրէ եկեալ
եմ վս անուան քո. արդ՝ որ 'ի փշրանաց
սեղանոյ քո անկանի՝ բաւական է ինձ կե-
րակուր. և որ յապիկեցն քում կաթի՝ բա-
ւական է ինձ ըմպելի։ Ասէ Եփրեմիանոս
ցեղբայրս ծառայս իւր. որդեակ՝ տար
զդա յանկելանոցն մեր։ Իբրև տարաւ



զնա

զնա յանկելանոցն՝ ձ՛իչ և աղաղակ բարձին
աղքատքն ա͞մ և ասեն. Թէ դա՛ ասա գայ՝
մեք ա͞մքն եղանեմք։ Ասէ եղբայրս. աղ-
քատիկ՝ վ͞ս.քո զա͞մ աղքատքն՝ ոչ կարեմ
հանել աստի։ Ասէ ալեքսիանոս. աղաչեմ
զքեզ՝ տա՛ր զիս մինչև յերրորդ դուռն։
Իսկ եղբայրս տարեալ զնա ասէ ցդռնա-
պանն. Թո՛յլ տուր սմա բնակիլ յայսմ տե-
ղւոջս. և եկաց անդ աւուրս Է։ Ապա յետ
Է աւուրն՝ ասէ դռնապանն. աղքատիկ
արի՛ և գնա՛ աստի. Բ և Գ անգամ վարեաց
զնա և ասէ՝ ե՛լ և գնա՛ աստի. քանզի տի-
կինն մեր սովորութ͞ի ունի գալ ընդ այս՝ և
երթայ ՚ի ծովեզրն լալ զորդին իւր ալեք-
սիանոս զոտէրն մեր։ Իսկ նա ասէր թէ՝ ես
աստ մեռանիմ, և ոչ գնամ այլ տեղի.
Իսկ յետ սակաւ ինչ աւուրց գայր տիկինն,
և առաջի նր͞ ծառայք. և ծառայիցն լոր
բեալք՝ առեալ զհերաց նր͞ քարշէին զնա
՚ի վ͞ր երեսաց իւրոց։ Իսկ նա ձայնէր և
ասէր. տիկին բարի մի՛ տար զիս այդպէս
առնել. Թէպէտ և աղքատ եմ, այլ ա͞յ ա-
րարած եմ։ Իսկ նա սաստէր աղջկանցն և
ասէր. Թո՛յլ տուք դմա բնակիլ յայդմ
տեղւոջդ պանդխտութ͞ե։ Իսկ ընդ աղքա-
տիկն նայելով ասէր տիկինն. աչքերն՝ իմ
ալեք

ալեքսիանոսին կու նմանի ։ Եւ ելեալ ե-
կաց և սկսաւ լալ ընդդէմ ծովուն և ա-
սէր ։ Ջուրք՝ որ 'ի ծովդ էք, մի թէ կլեալք
զորդին իմ զալեքսիանոս, ցուցէ՛ք ինձ զնա,
զի նա էր իմ յետին և առաջին մխի-
թարանքն ։ Օ՜ ի ցաւին աղէք իմ և գա-
լարին ։ և հեծեծանօք ողբայ սիրտ իմ
անդադար ։ Ո՛ւետաբեր հողմիկ ։ մի թէ
խապար ունիք և կամ զհոտն իմ ալեքսիա-
նոսին ։ զի տուրք էր նա ինձ յա̃յ, և խնդր-
ուած 'ի սրբասէր քահանայից ։ Եւ զայս
ա̃մ լսէր ալեքսիանոս և գալարէր աղէք նր̃՝
և խորովէր լեարդն, և ոչ տայր ծանօ-
թութի յայտնէ անձնականին ա̃յ ։ զոր ասէ 'ի
ս̃բ աւետարանն թէ՝ որ ոչ թողու ըզ-
հայր՝ կամ զմայր՝ կամ զկին՝ կամ զագա-
րակս վ̃ն անուան իմոյ, չէ՛ ինձ արժանի ։
և եկաց 'ի դուռն տան հօր իւրոյ Ժ̃Է տարի ։
Եւ ապա հայեցաւ ա̃ծ 'ի տառապանս նր̃,
և առաքեաց զհրեշտակապետն գաբրիէլ՝
առնել զհոգի նր̃ ։ Իբրև եկն գաբրիէլ,
ետ նմա ողջոյն և ասէ ։ Է՛կ ա՛լեքսիանոս
մ̃րդ ա̃յ՝ և հանգիր յուրախութիս երկ-
նից՝ 'ի վ̃րինն եդ̃եմ, 'ի բնակութիս հրեշտա-
կաց ։ զոր պատմէ պօղոս թէ՝ զոր ակն ոչ
ետես՝ և ունկն ոչ լուաւ՝ և'ի սիրտ մար-


դոյ

դոյ ոչ անկաւ, զայն պատրաստեաց ա՟ծ
սիրելեաց իւրոց ։ Եւ նա ասաց հրեշտա
կին՝ ներել սակաւիկ մի, մինչև գրեսցէ
զվարս անձին իւրոյ ։ Եւ յարուցեալ եառ
քարտէզ և մուր 'ի ճաղանեաց, և նստեալ
գրեաց այսպէս ։

Ես եմ ալեքսիանոս որդին ձեր․ հայր իմ
եփրեմիանոս․ և մայր իմ աննա․ և կին
իմ մարգարիտ ։ Ողջոյն թագաւորին և
քահանայից քաղաքին մեծաման ամ՟ցն ։
Ո՛հ լայր հայր իմ ծերացեալ․ այլ մխի–
թարեա՛ ա՟ծ ։ Գիտեմ զի դու զայս կեանքս
խնդրէիր, և ես զերկնային ։ Եւ տուր զեր–
կաթն․ և առ ի զոսկին փոխարէն 'ի տ՟նէ․
Ո՛հ լայր մայր իմ և մի՛ տրտմիր․ մխի–
թարէ զքեզ ք՟ս ։ Գիտեմ զի դու գայիր
և աղջկունքն առաջի քո և հասեալ նշ՟ 'ի
վ՟ր իմ, քարշէին զհերացս 'ի վ՟ր երեսաց
իմոց․ և ես լայի՝ ոչ զայն՝ որ զիս քար–
շէին, այլ զայն՝ որ լայիր դու և աղիողորմ
կսկծանօք հառաչէիր․ և իմ զն՟ս հայե–
ցեալ՝ գալարէր աղիքս․ և ոչ իշխէի տալ
ծանօթութի՟ յահէն ա՟յ ։ Ո՛հ լայր և դու
կին իմ մարգարիտ․ զի ահաւասիկ պատ–
րաստեցի ինձ և քեզ ճանապարհ, որ տա–
նի 'ի կեանսն յաւիտենից ։ Եւ ծալեալ

զթուղթն եդ 'ի մէջ ձեռին իւրում և իւր
փեաց · և նոյն ժամայն աւանդեաց զհո-
գին իւր 'ի փառս այ։ Եւ 'ի ջին ժբ հրեշ
տակք 'ի ձև մարմնաւորաց և յայտնեցին
քաղաքին և ասացին · արք գնացէք 'ի
դուռն եփրեմիանոսի՝ և գտէք զմարդն
այ վախճանել։ Եւ 'ի մէջ գիշերին դղրդե
ցաւ քաղաքն ամ. և վառեցին ջահս և մո-
մեղէնս՝ և գնացին գտին, որպ հրեշտակքն
ասացին ։ Եւ արկին 'ի վր նր դիպակս
պատուականս · և տեսին զի թուղթ ինչ
դոյր 'ի ձեռին նր · և կամեցան բազումք
առնուլ զնա, և ոչ կարացին հանել 'ի ձե-
ռաց երանելոյն։ Եւ մատուցեալ յառաջ
քահանայ մի իմաստուն և ասէ · ոչ է
պարտ առնուլ ումեք զթուղթն, այլ մի-
այն նմա՝ որ այսչափ ժամանակս կերակ-
րեալ է զդա ։ Եւ ուղարկեցին խնդիր
եփրեմիանոսի · և իբրև եկն՝ երկիրպագ-
նմա և ասէ · մեղայ քեզ ոբ աղքատիկ ·
զի ոչ գիտէի թէ այսպս ոբ էիր · և մեկ-
նեալ զձեռն , և առեալ զթուղթն , եբաց
և սկսաւ ընթեռնուլ ·

Եւ էր գրեալ այսպէս ·

Ես եմ ալէքսիանոս որդին ձեր · հայր իմ
եփրեմիանոս · և մայր իմ աննա · և կին



իմ

իմ մարգարիտ։ Եւ իբրեւ լուաւ՝ իսկոյն
ձգեաց զթուղթն 'ի ձեռաց իւրոց. եւ ան-
կաւ 'ի վերայ մեռեալ մարմնոյն, եւ յինքն առ-
փոփեալ գոչէր եւ լայր. եւ ոչ կարէին հա-
նել 'ի գրկաց նորա զերիս աւուրս։ Եւ ե-
կեալ մայր նորա եւ կինն՝ ոչ կարացին մտա-
նել առ նմա վասն ամբոխին։ Յայնժամ բե-
րին գանձս բազումս եւ ցանեցին շուրջ
զամբոխիւն. եւ քակեցաւ ամբոխն զկնի
գանձին, եւ ապա կարացին մտանել առ
Աղեքսիանոս մարդն Աստուծոյ։ Եւ անկեալ մայրն
'ի վերայ նորա. եւ հանեալ զլատինան, եդ 'ի վերայ
երեսաց մանկանն եւ ասէ. որդեակ իմ,
թէ կենդանի՛ ես՝ խօսեա՛ ընդ տառապեալ
մօր քո. եւ դնէր զերեսն 'ի վերայ սրտին՝ եւ
հեղոյր զարտասուսն. եւ ձայն բարձեալ
լայր դառնապէս՝ եւ ողբայր աղիողորմ յոյժ։
Եւ եկեալ կինն նորա՝ ընկէց զմատանին եւ
ասէ. արդ՝ ո՞յս է որ գալուստդ սիրելի
իմ Աղեքսիանոս. մինչեւ յե՞րբ պահեմ զամ-
շելեքս քո։ Եւ ո՞ կարէ պատմել զբովանդակ զկո-
ծումն եւ զողբումն նոցա՝ բոլոր քաղաքաւն
առ հասարակ։ Եւ յետ բազում լալոյն՝
տարեալ թաղեցին զերանելին նահատակն
Քրիստոսի զայրն Աղեքսիանոս, եւ շինեցին եկե-
ղեցի 'ի վերայ նորա։ Եւ կացեալք հայր եւ մայր
նորա

Ն՟ր կենդանի Ը ամ զկնի փոխման նըյն ծառայելով և սպասաւորելով նը գերեզմանի նր․ և յետ այնորիկ հանգեան խաղաղութե ՚ի քս։ Իսկ նըն ալեքսիանոս՝ փոխեցաւ ՚ի քս ՚ի հրոտից ամսոյ ԻԸ ՚ի
փառս այ հօր ամէն։

Բարեխօսութե կամաւոր աղքատացելոյն վս քո, և օտարացելոյն ՚ի մարդկային ծանօթութէ, քս այծ տուր և մեզ առել զկենցաղոյս զբաղմունս, և մերձիլ ՚ի նըդ նըց և ընդ նմին փափագելիդ,
Ամէն։

## Պատմութիւն Տէր Ղեւոնդեան․ և Սրբոյ նորին Ստեփաննոսին։



Թուականութե ազգիս հայոց մեծաց, ՉՁԿ ամին, յերկիրն ըռըշտունեաց ՚ի գաւառն տայքոյ ՚ի գօղայ քաղաքն, որ ասի արտամետ մերձ շամիրամակերտ մեծ դղեկին վանայ։

Որ քահանայ ոմն՝ մեծ ազգի և մեծատուն․ զարդարեալ ամ առաքինութե, անուն նր ստեփաննոս։ Սա էր յոյժ պարկեշտ և ամօթխած․ աղքատասէր և ողորմած․

մած · հիւրընկալ և մարդասէր · առատա
ձեռն և ամենաբաշխ · քաղցելոց կերակ-
րիչ, և մերկացելոց զգեցուցիչ · և յայլ
ամ՟ բարեգործութիւնս՝ ժիր և արի։ Նաև ՚ի
պաշտօնս այ՟՝ և ժամակարգութիւնս սբյ՟ ե-
կեղեցւոյ, անձանձիր՝ աղօթասէր · և զի
կին նր՟ ամուլ էր՝ և ոչ ծնանէր · վս՟ որոյ
միշտ հայցէր տալ նմա պտուղ օրհնութե՟՝
և ժառանգ սեփհական։ Իսկ որ զկամս
երկիւղածաց առնէ տր՟, լուաւ աղօթից
նր՟, և ետ նմ՟ արու զաւակ։ Յաւուր մ-
կրտութէն անուանեցին զնա Յուսիկ · և է
ամաց լեալ տղայն՝ հայրն սկսաւ գրել
՚ի տախտակի, և ուսուցանել մանկանն
զգիրս ածայինս · զի էր յոյժ հանդարտ՝
շնորհալի՝ և առատամիտ · երկայնոգի՝ և
քաղցրաձայն · յոյժ հեզ՝ և խոնարհ ծ-
նողացն · և քաղցր՝ և սիրուն յաչս ամ՟ցուն։
Յորժամ եղև մանուկն Յուսիկ ժ՟գ
ամաց՝ ծնօղքն տարան զնա ՚ի քեռւին իւր
առ մեծ վարդապետն և խստակրօն Ճգ-
նաւորն՝ Անանիա ՚ի մեծահռչակ աթոռն
վարագայ · զի ՚ի նմանէ կատարեալ ուսցի
զհին և զնոր կտակարանս ածայինն սբ՟ գ-
րոց · և կացեալ անդ առ վարդապետն
ամս գ՟։ Եղև յոյժ հմուտ և տեղեակ ամ՟

ածաշունչ տառից , և պատուէրանացն
այ· և՚ի չափ հասակի լեալ մանուկն յու-
սիկ՝ ծնողքն նր կամեցան մուծանել զնա
՚ի կարգ ձի։ Եւ հայրն նր ստեփաննոս
քահանայն՝ գնաց՚ի վարագ՝ էառ հրաման
՚ի վարդապետէն։ Եւ նա հրամայեաց
մանկանն յուսկայ գնալ ը հօրն՚ի տունն,
և հնազանդիլ հրամանաց ծնողացն՝ և առ-
նել զհարսանիսն։ Եւ նա ոչ կամէր· զի
ուխտ եդեալ էր ընդ այ սրբութբ պահել
զկուսութին իւր մինչև ՚ի մահ· բայց այժմ
ոչ իշխեաց ընդ դիմանալ հրամանաց վար-
դապետին· այլ՝ արտասուօք համբուրեաց
զաջն , և ելեալ ՚ի վարագայ գնաց ընդ
հօրն իւրում ՚ի տուն , և արարին զհար-
սանիսն։

Եւ յորժամ առանձնացաւ յառագաստին
միայն ընդ հարսին , յիշեաց զուխտն իւր
որ ընդ այ · այլև զողջախոհն յովսէփ՝ և
զերանելին ալեքսիանոս՝ յօրինակ եդեալ
իւրն։ Եւ քաղցրութբ ասէ ցաղջիկն· գի-
տացիր՝ քոյր իմ ըստ հոգւոյ · զի գրեալ է
՚ի գիրս կանոնաց ՚ի սրբ առաքելոցն , եթէ
ոք դիցէ ուխտ առաջի այ վս կուսութե
և սրբութե անձին իւրոյ՝ և ոչ պահիցէ
մինչև ՚ի մահ , այլ՝ ուխտազանց լիցի ա-


մուս

մուսնունն մեղօք, նա ուրացօղ լինի քո,
և ատելի ա՟մ մեզն ա՟յ. Ճշմարտութ՟բ այժմ
ասեմ քեզ զխորհուրդն իմ. զի ես ուխտ
եդեալ եմ ընդ ա՟յ սրբութ՟բ և անարատութ՟բ
պահել զկուսութիւն իմ մինչև 'ի մահ.
Ոչ թէ ամուսնութ՟բ ապականեցից զկու-
սութիւն քո՝ լինիմ ուխտադրանց և ուրա-
ցօղ. Ասէ աղջիկն. եթէ ամուսնութիւն ա-
նօրէնութի և ապականութի է, ապա զիարդ
'ի ն՟բ եկեղեցի՝ ա՟յ հրամանաւ, և ձեռամբ
քահանայից, խաչիւ և աւետարանաւ դը-
նեն պսակ 'ի գլուխ փեսային և հարսին՝
և լինին մարմին մի ըստ հրամանի ա՟յ. Ասէ
մանուկն յուսիկ. ծանիր՝ քոյր. զի պսակն
զոր քահանայքն դնեն 'ի վ՟ր գլխոց մերոց՝
այն մարմնաւոր է և ապականացու. և ը-
մեռանիլ մարմնոյն՝ անցանին ընդ նմա ա՟մ
փառք և մեծութիք և վայելչութիք ն՟րա.
Իսկ այն կենաց պսակն և փառքն և ու-
րախութիք ն՟եցն, անանցանելի և յաւի-
տենական է. և խնկոյն լոյս ած՟ային շնոր-
հացն ծագեաց 'ի սիրտ աղջկանն. Նու ա-
սէ ցյուսիկ. արդ՝ դիցուք ուխտ առաջի
ա՟յ ծածուկ 'ի մարդկանէ, զի 'ի միասին
կացցուք աստ 'ի տան հօր քում. և պա-
հեսցուք անարատ սրբութ՟բ զկուսութիւն
մեր՝

մեր՝ ոչ զհոգևոր եղբայր ըստ հաճոյից
կամացն այ։ Եւ զայս լուեալ պատանեացն՝
առէ․ տր ած մեր պահեսցէ զմեզ յուխ-
տին մերում զոր ուխտեցաք՝ և փրկեսցէ
յամ որոգայթից հոգւոյ և մարմնոյ։ Եւ
ապա 'ի ծունկս անկեալ արտասուօք և բա-
զում պաղատանօք՝ յանձնեցին այ զին-
քեանս։ Եւ զկնի աղօթիցն առանձնացեալ
զատ 'ի միմեանց ննջեցին․ և յորժամ հա-
րին զգիշերային ժամն, յայնժամ յարու-
ցեալ մանուկն յուսիկ հոգևոր սիրով մը-
խիթարէց զաղջիկն․ և յորդորեաց ջերմ
սիրով և երկիւղիւ կալ յաղօթս առ ած։
Եւ ինքն ելեալ 'ի տանէն ուրախութբ գը-
նաց յեկեղեցին 'ի ժամ աղօթիցն։ Եւ այն-
պէս ահիւն և երկիւղիւն այ՝ կացին և
մնացին 'ի միասին անարատ սրբութբ՝ զամս
ԺԳ անյայտ 'ի մարդկանէ․ բայց միայն
ծածկագիտին այ յայտնի էր․ Եւ ապա
քահանայն ստեփաննոս՝ խորհեցաւ ձեռ-
նադրել զորդին իւր քահանայ․ վն որոյ
կոչեաց զանանիա վարդապետն, և հան-
դէս մեծ արարեալ բազմութբ եպիսկո-
պոսաց՝ վարդապետաց՝ քահանայից, որք
ամքն կամեցան, և ձեռնադրեցին զյուսիկ
քահանայ․ և արարին ուրախութի մեծ


հո

հոգևոր և մարմնաւոր զաւուրս է։ Եւ յետ երկուց ամաց 'ի Թուին ՉՁԷ ամի տեառն քահանայն ստեփաննոս փոխեցաւ առ Քս։ Եւ տէր քահանայն տէր յուսիկ՝ որ աւուր կրթէր զանձն իւր պահօք և աղօթիւք. մաքուր սրբութե, և ամ առաքինութե։ Եւ յետ ժամանակաց ինչ՝ եղև գալ զօրացն Թաթարաց յարևելս 'ի գերել զտն հայոց։ Եւ գերեալ զբազումս 'ի գաւառէն տոսպեայ և յռշտունեաց՝ և դարձան 'ի տեղիս իւրեանց բազում աւարաւ։ Եւ ընդ բազմաց գերելոցն՝ գերեցաւ և անուանեալ կինն յուսիկ քահանային 'ի գիւղաքաղաքէն արտամետոյ. և տարեալ 'ի շահաստան քաղաքն Թաւրէզ վաճառեցին զնա կնոջ միոյ բոզաւագի, որ էր պոռնկախառնից։ Եւ կինն այն բոզաւագ՝ էր հաւատովն քրիստոնեայ. իբրև գիտաց իրիցկինն թէ՝ բոզաւագն քրիստոնեայ է։ Աղաչեաց զնա և ասաց թէ՝ես իրիցկին եմ պարկեշտութե կացեալ և անմերձ 'ի խառնակութէ անօրինաց. Ո՛ի այն Թաթարին՝ որ զիս գերեաց՝ յառաջին օրն հիւանդացաւ, և ած իմ պահեաց զիս անփորձ 'ի մեղաց. վն որոյ՝ աղաչեմ զքեզ տիկին, մի տալ զիս 'ի գործ

մե

մեղաց. զի գիտեմ կերպաս նկարել. այս
է՝ ապրշում բանցնել. և այնու քեզ առա-
ւել վաստակ առնեմ, և՛ի մեղաց զատ մը-
նամ. զի կին քահանայի եմ սրբութ̃ կե-
ցեալ՝ և զարշեմ՛ի խառնակութ̃ անօրինաց:
Օ այս իբրև լուաւ բողաւագն ՛ի կնոջէ
իրիցուն, արար ըստ կամաց նր̃: Իսկ է-
րեցն յուսիկ՝ ել՛ի խնդիր ամուսնոյն իւ-
րոյ. և գնացեալ եգիտ զնա ՛ի շահաստան
քաղաքն Թավրէզ. և կացեալ առաջի բո-
ղաւագին ՛ի կերպ մուրացողի: Իսկ հար-
ցեալ ցնա բողաւագն ասէ. ի՞նչ մարդ
ես. և նա ասէ, էրէց եմ և գերոյ տէր:
Իսկ կինն այն եցոյց նմա զիւր ամուսինն.
և՛ի խօսիլն իրիցուն ընդ կնոջ իւրոյ, տե-
սանէր բողաւագն, զի շունչ քահանային
բոցածաւալ իբրև զլոյս ելանէր, և դար-
ձեալ մտանէր ՛ի բերանն իւր նշան անմե-
ղութ̃ նր̃: Իսկ կինն բողաւագ՝ հարցեալ
և գիտաց թէ՝ դեռևս տղայ ոչ է եղեալ
նր̃. Յայնժամ ազդմամբ խնամոցն այ̃ ա-
սաց բողաւագն ցէրէցն թէ՝ ՛ի քեզանէ
իբրաց մի խնդիր ունիմ, դու զայն ինձ
տուր՝ և ես զկինդ քո տաց քեզ ձրի:
Ասէ էրէցն. զի՞նչ է խնդիր քո տէր իմ.
և նա ասաց, քեզ որդի տալոց է ա̃ծ՝ և



այն

այն քահանայ լինելոց է։ Ո. այս հայցեմ
'ի քէն տէր հոգւոյ իմոյ զառաջին պա-
տարագն որդւոյ քո՝ 'ի քաւութի և 'ի թո-
ղութի բազում մեղաց իմոց։ Ասէ երեքն.
եղիցի ըստ բանի քում. և զխնդրուածս
սրտի քո՝ տէր կատարեսցէ։ Ասէ բոզա-
ւագն. ահա կին քո անփորձ 'ի չարեաց, և
անմեղ 'ի յանօրէնաց։ Եւ ահա այլ ևս
է Ճ դեկան ձեզ 'ի պէտս շինութե, երթայք
ողջութ և խաղաղութ. Եւ առեալ երեքն
յուսիկ զկինն իւր՝ և եկեալ 'ի գիւղն իւ-
րեանց արտաքոյ՝ արարին շինութի իբրև
զամս ը. և յաւարտ շինութեցն տմի, ասէ
երեքն ցամուսինն իւր. դու ինքնին գի-
տես՝ զի տմ շինութիս մեր զորս արարաք,
և տմ կահք և կարասիք մեր՝ զոր այժմ
ունիմք, այս տմ 'ի պարգևաց ընչից բո-
զաւագին է՝ զոր շնորհեաց մեզ, և հաւա-
տով խնդրեաց. իբր թէ՝ 'ի մէնջ եղելոյ
որդւոյ առաջին պատարագն նր 'ի քաւութի
և 'ի թողութի մեղաց իւրոց. և զի մեք ուխ-
տեցաք առաջի այ, զի սրբութ պահեսցուք
զկուսութիս մեր մինչև 'ի մահս մեր. և
ուստի՞ ծնանիցիս դու որդի՝ որ այն լի-
նիցի քահանայ. և զխնդրուածս տիկնոջն
այնորիկ կատարեսցէ։ Ասէ իւիցկինն.

տէր՝

տէ՛ր՝ հանապազ ընդ իս ասես թէ՝ առանց
հրամանին ա՟յ տերեւ մի 'ի ծառոց ոչ անկա-
նի, արդ՝ զոր ինչ հրաման տ՟ն էն՝ օրհնեալ
եղիցի յաւիտեան: Նաև քահանայն յու-
սիկ. ես երթայց 'ի ս՟բ եկեղեցին՝ և անդ 'ի
տուէ և 'ի գիշերի աղօթիւք պաշտամամբ
և պատարագօք աղաչեցից զտ՟ր ա՟ծ. և
դու 'ի տան քում 'ի սենեկի աղօթեա միշտ
ջերմ արտասուօք, թերևս մարդասէրն ա՟ծ
յայտնեսցէ մեզ զհաճոյս կամաց իւրոց:
Եւ 'ի վ՟ր այսմ ուխտի անցին աւուրք իբ-
րև երեսուն, յաղագս մանկան ա՟յ եկն նուի-
րակ 'ի ս՟բ էջմ՟այ վարդապետ մի ստեփա-
նոս անուն, յոյժ առաքինի և ճգնող
գեաց, զգաստ և պարկեշտ յա՟մ ճանա-
պարհս ա՟ծայինս՝ յոյժ ծերացեալ ալեօք,
գայ 'ի քաղաքն տրապիզոն, և կացեալ անդ
զաւուրս ինչ: Եւ 'ի կիրակի գիշերի՝ զկնի
առանձնական աղօթիցն, տեսանէր տեսիլ
երազոյ. զի էր տ՟ր յուսիկ քահանայն զար-
դարեալ սպիտակ և պայծառ քահանայա-
կան զգեստիւ, և խաչ գաւազան ունի-
զօծ՝ ականակուռ ընդ ելուզեալ մարգար-
տօք՝ ծաղկեալ շուշանօք յաջոյ ձեռին
ն՟ր, և յահեակ ձեռին ս՟բ աւետարան:
Եւ 'ի գլուխ գաւազանին՝ ետես բուսեալ



կա

կանաչասաղարթ տերևով և մեծավայե_
լուչ վարդ մի՝ բոլորազարդ ծիրանածա_
ւալ և կարմրափայլ՝ ոպ զհուր 'ի վառ · և
զարհուրեալ 'ի տեսլենէն զարթեաւ ։
Իսկ զկնի արձակման առաւօտեան ժա_
մուն՝ վարդապետն այն, կոչեաց առան_
ձին առ ինքն զտր յուսիկ քահանայն · և
տարեալ յաւանդատունն, և երդմամբ
էհարց զնա վս վարուց և առաքինուեն նր ։
Իսկ նա՝ յառաջ ոչ կամեցաւ յայտնել նը
մա բան ինչ՝ մինչ որ ընդ բանիւ արար ըզ
նա վրդպտն · և ապա քահանայն յուսիկ,
սկսաւ պատմել նմա խոստովանաբար զամ
մի ըստ միոջէ ։ Իսկ վարդապետն ստե_
փաննոս՝ հիացեալ ասէ · օրհնեալ է ած՝
որ տայ զօրութի և համբերութի սիրողաց
իւրոց ։ Իսկ ապա յետ հոգևորական մը
խիթարութեն, ասէ վարդապետն ցտէր
յուսիկ · գիտես, որդեակ՝ զի 'ի սկզբանէ
զնախնիքն մեր՝ արու և էգ ստեղծեաց,
զի ամուսնութբ աճեսցեն և լցցեն զերկիր ·
ոպ և առաքեալն պօղոս ասէ · պատուական
է ամուսնութի · վյ պատուիրանադրութբ
տն ես տամ ձեզ վերստին հրաման ամուս
նութե ձերոյ ։ Ապա յետ աւուրց ինչ,
յղացաւ կինն տր յուսկայ · և ետ ած նմ


զա

զաւակ արու • զաղաւնին ամբիծ զսբն
ստեփաննոս, որ կրթեալ վարժեցաւ ՚ի կը-
րօնս ածպաշտութե• Եւ ջրթափեալ եհաս
՚ի գիտութի բարուց եւ չարի • սկսաւ հե-
տեւիլ բարեաց, եւ խորշիլ ՚ի չարեաց պար-
կեշտ վարուք եւ ուղիղ գնացիւք • կրթէր
զանձն իւր ՚ի պահս եւ յաղօթս սրբութե•
հեռանալով ՚ի լկտի եւ յանմիտ բարուց
կանանց ՚ի տիս տղայութե, եւ ՚ի հասակն
մանկութե • զկատարելոցն ունէր զինքեան
զգիտութիւն • խոհեմ եւ իմաստուն• ժուժ-
կալ եւ համբերող ուսումնասէր եւ ողոր-
մած • հլու եւ հպատակ հրամանաց ծնո-
ղացն• հեզ եւ հանդարտ առ ամենն• Եւ ե-
ղեւ յաւուր միում գնալ նմա ՚ի ջաղացն՝
տանիլ ցորեանն ՚ի տանէ իւրեանց ՚ի գիւղն
յանդըստառ. ՚ի աղալ յաղօրիսն• Եւ զի էր
յաւուրսն յայնոսիկ սղութի հացի • եւ աղ-
քատքն յոյժ տառապէին • եւ ետես, զի
բազում աղքատք հաւաքեալ էին ՚ի դուռն
ջաղացին• Եւ ինքն բարեսնունդ պատա-
նին ստեփաննոս՝ բաժանեաց զամ ցորեանն
աղքատաց կուց կուց, եւ մնաց խորգն
դատարկ• Ապա անտես ՚ի մարդկանէ ելից
զայն մանր աւազով, եւ գերմակ մոխրով•
եւ ասաց ոմանց օգնել ինքեան՝ եւ բառ-
նալ

նալ գրաստուն իւրոյ • և բարձեալ զէշն՝
եբեր յարտամէտ , վարեաց զէշն 'ի բակն
իւրեանց • և ինքն փախուցեալ գաղտա_
բար անկաւ 'ի ճանապարհ , և գնաց 'ի
բերկրի: Իսկ երէցն յուսիկ՝ առեալ զբեռն
'ի յիշոյն , և տարաւ 'ի տունն • և մայրն
բացեալ զբեռն՝ եհան ալիւր , և արար խը
մոր • և հասուցեալ զհացն ասաց իրիցուն •
ե՛լ 'ի դուրս , և տե՛ս զաղայն՝ և ասա , որ
գայ հաց ուտէ , զի քաղցեալ է • զի կար_
ծէին թէ՝ ընդ աղայն գեղջին 'ի խաղ է •
և կամ թէ աշխատեալ 'ի ճանապարհին՝ և
ննջեալ է ուրեք յորմ տակ , և կամ 'ի
տանիս: Իսկ ելեալ յուսիկն շրջեցաւ ընդ
գիւղն բոլոր՝ և ոչ եգիտ: Իսկ մայրն յոյժ
տագնապէր մտօքն թէ՝ զի՞նչ եղև աղայն:
Իսկ յերեկոյին հասեալ՝ առաւել հոգային
ծնօղքն , զի մինչ 'ի յայն ժամայն՝ թէ ուր
և իցէ , երեկոյին հասեալ 'ի տունն գայցէր •
և զգիշերն ամ̃ անքուն կացեալ ծնողքն՝
հոգային զաղայն: Իսկ մանաւանդ թէ՝
առաւել ևս մայրն ըստ մայրական գթոյն
աղէկիզեալ լայր դառնապէս • որպ̃ և է՛
սովորութ̃ մօր հոգալ զորդւոյս • վա՜յ՝ թէ
քաղցեալ է • և եղուկ թէ ծարաւի է •
ո՜հ թէ զի՞նչ պատահեցաւ նմա • ու՞ր է՝
և

և կամ զխորդ կերայ: Եւ այնպէս զգի-
շերն ամ՟ աղէկիզեալ լացին դառնապէս
հայրն և մայրն: Եւ ՚ի վաղիւն գնացին
աստ և անդ, ՚ի գիւղ և ՚ի քաղաք. գնաց
հայրն ՚ի յոստան՝ և մայրն ՚ի վան, հարցին
և ոչ գտին, դարձան ՚ի տունս իւրեանց՝ և
լային անմխիթար տրտմութբ զցայգ և
զցերեկ: Եւ ապա յետ Ժ աւուր հանդի-
պեալ ումն ՚ի ծանօթից նց, և ետես զնա ՚ի
լաց տխուր դիմօք: Եւ հարցեալ գիտաց
զպատճառն. և ասաց թէ՝ զստեփաննոսն
ես տեսի այս ինչ օր ՚ի գիւղն կոչանի. և
ասացի թէ՝ ի՞նչ բանի եկեալ ես աստ.
և նա ասաց թէ՝ հայրն իմ յուղարկեաց
զիս երթալ ՚ի բերկրի ՚ի պէտս այս ինչ
բանի: Եւ նոքա ուրախացեալ օրհնեցին
զայրն և զճանապարհն նորին: Եւ յա-
րուցեալ հայրն որ յուսիկ գնաց ՚ի բերկ-
րի. և ել ՚ի վանս արդելան, և ետես զոր
դոյն, և խնդութբ լցեալ ասաց. ծորդեակ՝
զի՞նչ գործեցեր ընդ մեզ. մայրն քո՝ և ես՝
տառապէալ լալով աչօք՝ և որոնեալ խնդ-
րեցաք զքեզ ՚ի վան և յոստան՝ և ՚ի գիւղն
ամ: Եւ ապա ասաց թէ՝ մայրն քո հոգ
հասոյց՝ և ես ելեալ շրջեցայ ընդ գիւղն
ամենև ոչ գտի զքեզ: Եւ ասաց ստեփան-



նոս

